

9.

1961

1973

24  
F - 49

59

2010

28  
P-57

W. hux

(P. 2)

24  
F-49

ԲԵՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ

Ժ. ԱՄԵՐ-ԱՄԵՐԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՔԱՐՈԶԶԱԿԱՆ X

# ԹՈԹՈՎԱՆՔՆԵՐ

1008  
36014

Ա.

- առաջին համար

ԹԻ ՓԼԻՍ

Արագատիպ Մն. Մարտիրոսեանցի  
Միքայելեան Փողոց № 81.

1901

35869-4.к.

Дозволено Ценз. Тифлисъ 23 Августа 1901 года

2001

19169 - 59

1001

Հստ բարձու հրամանի Նորին Ս. Օծու-  
թեան Վեհափառ Հայրապետի ազգիս, Դիւանս  
թոյլատրէ տպագրութիւն երկասիրութեանս  
հաստատելով ստորագրութեամբ եւ դրոշմամբ  
կնքոյ Հայրապետական Դիւանի: յ18 դեկտեմ-  
բերի 1900 ամի ի Ս. Էջմիածին:

Դիւանապետ ԿՈՐԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ





Նուիրում եմ Տփխիսի Վանաց մայր Եկեղեցու Շնորհագարդ աւագ բահանայ Տ. Գիւտ Աղանեանին:

### Հայր պատուական

Քարողական առաջին թոթովանքներս որքան և աննշան լինէին նոքա, Զեր բարի անուանն եմ նուիրում և ահա ինչու: Այն օրերում, երբ դեռ առաւել երիտասարդ էի և յուսալից աշքերս շրջում էին չայոց ս. Եկեղեցու գաւթում, չայոց բանաւոր հօտի վերայ, բազմաթիւ հայ քահանաներից շատ քշերին տեսայ քրտնշաղ սիրով թանալիս այն ցամաք պարտէղ, վաստակաւոր մշակ՝ այն հունձի դաշտում: Բայց քեզ տեսայ այն օրերում ս. Աթոռի մատենադարանի փոշիների մէջն աշխատելիս, քո բնակարանում՝ նախնեաց մատենագրութեան այդ հիւրընկալ յարկում, գրքերի հետ խօսելիս: Քո խօսքը, քո գործն արձանացաւ փոշիներու աշխարհէն հանած «Դիւանիդ» հատորներու մէջ, «Լումայիդ» բայց իրօք մեզ համար ոսկի հանդիսիդ մէջ. թողնում եմ յիշատակել բոլոր գործերդ: Ես հաւատացի, թէ հայ ժողովուրդը որքան

և հոգւով աղքատացել է, բայց դեռ գիտէ իւր մաշ-  
ուած ծոցէն մէկ-մէկ Գիւտեր արտադրել, հաւատա-  
ցի թէ Հայոց ս. եկեղեցին օրհնել ու ոգևորել գիտէ  
նոցա, որոնք այդ եկեղեցու սիրովը կշնչեն:

Ահա թէ ինչու եմ նուիրում քեզ իմ առաջին  
թոթովանքներս, որից աւելի բան չունիմ յարգանքս  
արտայայտելու գէպի քեզ:

Քո պսակդ դու արդէն հիւսել ես, թող իմ  
թոթովանքներս իրքն մի կուց ցօղ սրսկեմ նորա  
վերայ, որ իմ աշքումս առաւել փայլի և զիս մխի-  
թարէ:

*Քոյդ Բենիկ վարդապետ*  
Նա մնաւու միայ ովն առա մզնու մաշնու և  
առա ովք ուր Նույնու ով շաբան աշա և Նույնու  
ով և նախ սպաս ընտառ և Ա որատունդ ու  
շառ զրաման ուրս Նույնու տուրուն և արա-  
մինդ առ ընդմանան ուր Ա Ծննդայ պահ  
ուր զնուց մը ամսուն և խորի բաշուց լուսն  
ուր և մասուց մին մին թուշ զատքունահ ընա-  
պարանձան վանդ ու Նույնու մա շան ըն  
և ամայաման ու ամսունահ մին պարանձան ու  
շաբանան բան ֆան Ծննդանան զաման  
մնար ու զնուց ու ամսուն ամ պարանձ Նույն  
պարանձ և մաման մնուան ու մաման ապամանու  
զաման ու զնուց զան պարանձ Զին տղմանուն  
զայտ զնուանահ նա նույնու Զին սպարան միս  
նույն պարանձ ուր Ա զնուանահ ու զնուանը

ու անորոշական է մասն հյութառող նմաց պայքածութեա  
քայլ ստորան միզմի սովորութեան զնու  
առաջ պարագ բայ մայ պահանուած մասն նյութադիման  
մա կը պահանձման խոր և պահու նմա նաքանակ

## Հ Ն Թ Ե Ր Ց Ո Ղ Ի Ն

Սիրելի ընթերցող

Առաջին երիտասարդութեան օրերիցս սկսած  
հաւատացել եմ թէ կենդանի խօսքը, որքան և անոյժ  
լինի, այնուամենայնիւ գէթ սթափեցնող է բարոյա-  
կան թմրութենէն, ուստի կոչմանս բարոյական ճըն-  
շումով «զբանն» քարոզեցի ամենուրեք՝ գիւղ ու քա-  
ղաք, ուր հայոց եկեղեցի և ժողովուրդ տեսայ:

Ծատ անգամ ունկնդիրներս ստիպել են նուաս-  
տիս տպագրութեան յանձնել քարոզածներիս գէթ-  
մի մասը, բայց միշտ խոյս եմ տուել և համարձա-  
կութիւն չեմ ունեցել չայոց ս. եկեղեցու սեամի  
մօտը դնել տկար խօսքիս տկար արձանագրութիւնը:

Արդ, ստիպեալ ի հարկէ որոշեցի մանրիկ տետ-  
րակներով հետզհետէ հրատարակել քարոզիկներս,  
զոր «թոթովանք» կոչեցի և յիրաւի թոթովանք են  
դոքա, մանուկ քարոզչի թոթովանք: Ինչ որ գըտ-  
նես զրքոյկներիս մէջ իմը չեն, սիրելի ընթերցող.  
գաղափարներու մի մասը իմ երախտաւոր ուսուցիչ-  
ներինն են, որոնք զիս որոշ ուղղութեամբ դաստիա-  
րակեցին, միւս մասով ազգային և օտար ընտիր մա-

տենագրաց ընթերցանութեանն եմ պարտական, ո-  
րոնք ուսուցիչներիս թերին լրացրին հոգուս կազ-  
մակերպութեան նկատմամբ, իսկ այդ բոլորը լուսա-  
բանուեցան ինձ համար ս. գրքով, Աւետարանի ան-  
նման վարդապետութեամբ.

Հասկանալի է թէ ես ոչինչ չունիմ սեպհական.  
Եթէ ասեմ այդ գաղափարներն ես թաթխել եմ իմ  
զգացմունքներուս մէջ ու այնպէս միաւորել, այդ էլ  
գուցէ սխալ լինի, վասնզի ոգևորութեանս կրակը  
դարձեալ ինձնից դուրս է եղել և հայոց ժողովրդի  
մէջը. քարոզիչ շէի, բայց այդ ժողովրդի և իւր ս-  
տաճարի սէրը զիս քարոզիչ դարձուց:

Ա'բդ՝ ընթերցող, կարդա տետրակներս ոչ իբրեւ  
իմ, այլ իբրև «զքոյս ի քոյոց», իբրև յուշարար քո  
իսկ լաւագոյն զգացմունքներու և պաղած առաքի-  
նութեանց. միայն քո օգտիդ համար են զրուած նո-  
քա. կարդա, վնաս երբէք, բայց օգուտ թերևս ստա-  
նաս գէթ սակաւ չափով:

ԲԵՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ

Ա.

## ՔՐԻՍՏՈՆԵԿԱՆ ՍԻՐՈՅ ՄԸԾԻՆ

Հարցնում եմ ձեզ, քրիստոնեայ հայ եղբայրներ, երբ ապաշխարութեան օրերու մաքրիչ հովը թարմութիւն տուաւ ձեր թմրած աշքերին ու ձեր ծանրացած արտեանունքները վեր բարձրացան, ինչ տեսաք առաւել հսկայական առաքինութիւնների շարքում. սէրը չէր արդեօք: Եթէ ոչ, վայ մեզ, վասն զի առաքինութեանց պարտէզը մտնել կարող շէք առանց սիրոյ, որ հրաշալեաց գրախտի միակ դուռն է, միակ մուտքը:

Ուր էր թէ կարող լինէի սէրը սահմանել, որ մի անհունութիւն է, սէրը պատմել, որ անճառելի է: Դա մի զգացմունք է, որ Աստուած մարդու կրծքի մէջն է զրել նորա ստեղծագործութեան օրից, որպէս զի կեանքը շարսնակուի, կեանքը քաղցրանայ և կեանքը կատարելագործուի ու հրաշանայ: Այս խօսքերն ես ի զուր շեմ շեշտում՝ «շարունակուի, քաղցրանայ, կատարելագործուի կամ հրաշանայ», վասն զի սէրը երեք համապատասխան արտայայտու-

թիւն ունի։ Ամուսնական սէր, որ երկու անձնաւորութեանց կրծքումն է խօսում։ Նորա գըրկումն է պահում կեանքի շարունակութիւնը։ Որդիական և ծնողական սէր։ Նախորդին և յետնորդին իրար հետ կապող սէրն է այս և հէնց այդ կապը կեանքին քաղցրութիւն է տալիս։ Ոլքան և սկզբնական է սիրոյ այս երկու տեսակը, այնուամենայնիւ դոքա շատ նեղ են, դոցա մէջ լոկ մերձաւորների երջանկութիւնը կայ, որոնցից գուրս միայն անտարբերութիւն և ատելութիւն ու նախանձն են թագաւորում, եսականութեան այս հարուստ բերքերը։ Եթէ այս տեսակի սէրը սիրոյ ծառի արմատն է չէ սակայն ամբողջ ծառը, չէ հազարաւոր ճիւղ, ծաղիկ ու պտուղով պսակուած համատարած բարձունքը սիրոյ։ Ես լուսմ եմ սիրոյ այս տեսակների մասին և կանգ եմ առնում այն սիրոյ վրայ, որ կեանքն է կատարելագործում, որ հրաշցնում է կեանքը. այդ տեսակը «Քրիստոնէական սէր» անունն է կրում։

Այն սրտակոտոր վայրկենին, երբ Գողգոթայի բարձունքում «Ամենայն ինչ կատարեալ է» վերջին հառաշանքը ցամքեցաւ անարատ զոհի շրթունքների վերայ, նոյն հառաշանքից մի ծաղիկ բուսաւ ու բոլորեց արիւնոտ խաշը։ Խաչակիր ու խաչապաշտ քրիստոնեան չէ քրիս-

տոնեայ, երբ պաշտէ խաչն ու մերժէ այն ծաղիկը, որ խաչի գօրութիւնն է, խորհուրդն է, հոգին է, ամբողջ մեռնող խաչեցեալից միշտ անբաժան ու անմահ խաչեցեալն է։ Եյդ ծաղիկը քրիստոնէական սէրն է։

Քրիստոնէական սէրը մի անհունութիւն է, որ բարութեամբ է լցուած։ Նա ամփոփում է իւր մէջ ոչ միայն որոշ անհատների բարելաւութիւնը, այլ ամբողջ մարդը։ Նա տարածւում է նոյն իսկ մարդկանցից դուրս, կենդանիների վերայ։ Քրիստոնէական սէրը հաւաքում բերում է բոլոր մարդոց ու լեցնում սիրողի սիրաը, կապւում են սիրուողները սիրողի հետ և բոլոր միասին միանում Աստուծոյ հետ, որ կատարեալ Սէրն է։ Հէնց այդ ներդաշնակ միաւորութեան մէջն է կատարելութիւնը, հրաշը կեանքի։

Ճշմարիտ քրիստոնէի համար մէկ առաքինութիւն կայ միայն, և այն սէրն է, մնացեալ առաքինութիւնները լոկ սիրոյ ճիւղաւորութիւններն են։ Սիրողը զթու է, որովհետեւ սէրն անգութ լինել չի կարող. համբերող է՝ որովհետեւ երկայնամիտ է, վեհանձն է՝ որովհետեւ սէրը նախանձ չունի, հեղ է՝ որովհետեւ սէրը հպարտ լինել չի կարող, բարի է՝ որովհետեւ սիրողը չարիք հասցնել չի կարող, ներո-

դամիտ է՝ որովհետեւ սէրը խստասիրտ չէ ևայլն։  
Այս իսկ պատճառով ես չեմ հաւատում թէ՝  
որեէ յանցանք կարող է զրկել մարդուն Աս-  
տուծոյ արքայութիւնից, եթէ մարդ իմացել է  
քրիստոնէական սիրով սիրել։

Ո՞ւր է քրիստոնէական սէրը։ Քրիստոնէա-  
կան սէրն ամենուրեք է. Նա խօսում է սառու-  
ցիալ բնեոներում, այրեցեալ երկրներում, ար-  
ևան դաշտերում, մութ բանտերում. Նա նա-  
հատակների շիրիմների վերայ ծաղկող արքն-  
գոյն վարդն է։ Այս սիրուց էլ աւելի ամեն ինչ  
ընդգրկող հրաշք չի եղել. սէրն երկրագունդից  
ընդարձակ է, վասն զի ամբողջ երկրագունդն  
է պարունակում. սէրը և տիեզերքից մեծ է,  
վասն զի նա ծաւալում է տիեզերքից մեծ  
Աստուծոյ շուրջը։

Գուցէ կուզէք քրիստոնէական սիրոյ պատ-  
կերներ տեսնել, բարի, զնանք այդ սիրով ապ-  
րովներից մէկի խղճուկ բնակարանը, մի քա-  
րայր, որ մշտական ձիւնազատ լիւների դագա-  
թին է գտնում։ Մռայլ գիշեր է, մոնչում է  
բուքը, ձեան հոսանքով բաղխում մատուռը։  
Մատրան մէջ խաչուած սիրոյ առաջ մի կան-  
թեղ է վառւում. նորա աղօտ լուսի տակ եր-  
կու հոգի ծունկի իջած բոցոտ մըմունջներ են  
տարածում խաչի պատուանդանի շուրջը։ Ալե-

զարդ ծերուկը դարձաւ դէպի մատաղ կենդանին, որի ընչացքները հազիւ էին սեացել: «Որդեակ իմ, կարող ես հաւատարիմ մնալ ուստիդ, կարող ես այս սառցապատ միայնութեան մէջ, այս սոսկալի բուքերու տակ ճանապարհների վերայ շրջել ու մոլորուած ճանապարհորդներին մահուան ձեռքից խլելով մեր մատուոք բերելու: Այս, հայր, պատասխանում է երխտասարդը, մնաք բարով ասում անձնական երջանկութեան, երկու կաթիլ գլորում աշքերից խաչի առաջ ու սև քօղը գլուխը բաշելով դուրս է սողում բուքերու տակ մոլորուած ճամբորդներուն օգնութիւն հասցնելու համար:

Աչք ածեցէք այս դաշտի վերայ ու եռացող կեանքը տեսէք. խելազուրկ ու ապականուած ժողովուրդը մէկ տեղ խունկ է ծխում մամոնայի արձանին, միւս տեղ չարաթոյն լեզուով խայթում մերձաւորին. այստեղ կեղծիք է ճառում կեղծ բարեպաշտը, այնտեղ այրեաց և որբոց տունն ուտում կեղծ բարեգործը. այստեղ խարեբայութեան նուրբ թակարգներ, այնտեղ տգիտութեան անվերջ խաւար. այստեղ օտարամոլութեան ախտն է եռում. այնտեղ սուրբ յիշատակաց մնացորդը անարգւում. այստեղ բռնութիւն, այնտեղ անհնագանդութիւն. մէկ խօսրով ամններեան խոտորեալ, ամենե-

քեան անպիտանացեալ, ամեներեան կոյր և ժօտակայ անկումն տեսնելու անզօր։ Այս տխուր պատկերի առաջ դեղնում դալկանում է նախնեաց սուբբ շիրիմների վերայ դաստիարակուած մէկը։ Նորա հոգու մէջ անմիտ ժողովրդի գլխին գալիք թշուառութիւնն է պատկերանում։ Խռովում է նորա հոգին։ Նա շրջում է ատելութեամբ փրփրացող հրապարակի վրայ, նախատում, յանդիմանում, դարձ քարոզում, իսկ կատաղի ամրոխը նորա վերայ է բարձում իւր ախտերը, ապտակով ձաղկում և անժամանակ երկրի անլոյս ծոցը զրկում սիրոյ առաքեալին, որի շիրմի շուրջը միայն ծաղկում ու պտղաբուրում է սերմանուած սէրը։

Ահա ձեզ մի աղնուական օրիորդ, փափկութեամբ սնուած, ծնողների սիրովը ցողուած մի աչազեղ աղջիկ, որի վերայ շատ ընտիր երիտասարդների յուսալի աչքերն էին սենուած։ Բայց ահա նա մերկանում է իւր զուքսն ու զարդը, մետաքսն ու կերպաս, հագնում կամաւոր այրիութեան սև շորը, կրծքի վերայ մի կարմիր խաչ կարում, թեն առնում հայրական ժառանգութիւնից մի կողովիկ միայն և անձնական բազգի գերեզմանի վերայ հոգւոց ասելով հեռանում է։ Ուզում ես տեսնել նորան։ մտիր ճանապարհիդ վերայի հիւանդանոցը, ահա

նա լուանում է անտէր հիւանդի վէրքը, հա-  
նում իւր կողովից սպեղանի ու փաթեթ և ամո-  
քում թշուառի ցաւը։ Մտիր լերան լանջում  
այրիի պէս մենակ ցցուած կեցած վանքը.  
ահա նա իւր կողովով, հողին ուրախ, դէմքը  
տխուր գնում է շրջակայ գիւղեր, որբերի, այ-  
րիների արցունքը սրբելու։ Նա ժողովում, նա  
կերակրում է քաղցածին. այրու քոյրը, որբի  
մայրը նա է, վշտերի մէջ՝ մխիթարիչ, մահուան  
անկողնում՝ յուսագրող, դառն վհատութիւնը  
քաղցրացնող այս քոյրն է, ողորմած քոյր,  
քրիստոնէական սիրոյ այս ընտիր առաքեալը։  
Ճատ են այսպիսիները։

Արդ, տեսաք ուր է քրիստոնէական սէրը, տե-  
սաք քրիստոնէական սիրոյ լուսաշաղ պատկերը։

Սէրն ոյժ է. մի ոյժ, որ հզօր է տան-  
ջանքից, հզօր աշխարհի քոլոր ոյժերից, հզօր  
է մահից. մահու սարսափը սոսկալով փախչում  
է սիրոյ առջեից։ Սէրը մի մշտավառ խարոյկ  
է, որ արեան ոչ մի հեղեղով չի հանդչի։ Քրիս-  
տոնէական սէրը, ասում է մի իմաստասէր,  
ձեռքերից շվթան խորտակող, ոտքերից կա-  
պանքներն արձակող և մարդուն ազատութիւն  
տուող ոյժն է»։ Եւ իրաւունք ունինք պնդելու.  
տուէք քրիստոնէական սէր, և կջնջուի աշխար-  
հից ամենայն շարիք ու քոնութիւն։

Քրիստոնէական այս մեծ ոյժին էք պարտական, կանայք, որ երբեմն մուխ կամարների տակ կթառամիք Աստուծոյ արևից ու անձրեից զուրկ ծաղկի նման՝ խտրող հեթանոսութեան, հեթանոս անհաւասարութեան երեսէն. իսկ այժմ Աստուծոյ արեն ու անձրեղ և ձեզ վերայ կտեղայ ու աղատութիւն կշնչէք:

Այս ոյժին ես պարտական, երբեմն աշխարհի հզօրին ստրուկ, տիրոջդ ձեռքով վաճառատներում անասունի պէս վաճառուող հէգ մարդքեղ համար յառաջ զնալու յոյս չկար. ստրուկ էիր ծնուած, ստրուկ պէտք է ապրէիր, ստրուկ մեռնէիր. իսկ այժմ քրիստոնէական սէրը քանդել է կապանքներդ, սիրիր, աշխատիր, զօրացուր հոգիդ և վաղը իշխանական աթոռ նստելու իրաւունք էլ կունենաս:

Եյդ սիրուն ես պարտական, մանուկ աշկերտութիւն, երբեմն սրունքներդ կոճղի մէջ դամուած, բրածեծ ու հոգիդ բռնութեամբ դաստիարակուող աշակերտութիւն, հասակաւորներից արհամարհուած պատանեկութիւն: Իսկ այժմ. այժմ քո հասակդ, քո կեանքդ և հասակաւորներին է ցանկալի դարձել: Յիշում ես թէ ինչպէս քո հասակակիցներիդ արհամարհողներուն նախատեց սիրոյ վարդապետն ու ձայն տուաւ. «Թոյլ տուք մանկտուոյդ գալ առ իս»:

Վերջապէս մըլք թուեմ քրիստոնէական սի-  
գոյ արդիւնքներից, բարձր ի դրուխ պահծացող  
աստուածահաճոյ հաստատութիւնները, հաւա-  
սարութեան ողին, ազատութիւնը. անվերջ են  
այդ աննման ոյժի արդիւնքները։ Այս արդիւն-  
քի առաջն էր խոնարհուում սրտերի մեծ աշ-  
խարհակալ Պօղոսն ասելով. «Լեզուները կլոեն,  
մարդարէութիւնները կխափանուին, իմաստու-  
թիւնը կխափանուի, բայց երեք բան ընդ միշտ  
կմնայ՝ հաւատ, յոյս, սէր, և սոցանից ամենա-  
մեծը սէրն է»։ Դա մի համաշխարհային լեզու  
է, որ խօսում է կրթեալի և անկիրթի հետ,  
տպէտի և գիտնոյ հետ, մի անժամանակ անցա-  
գիր մարդկանց սրտերի աշխարհը շրջելու։

Արդ, քրիստոնէական սիրով մկրտուած իմ  
ունկնդիրներ, քրիստոնէական կրօնը սիրոյ կրօն  
է, իսկ սէրն ամենուրեք պիտի լինի, ուստի  
քրիստոնէական կրօնը ոչ վանքերի կամարնե-  
րում պիտի քարանայ և ոչ կրօնաւորների կըրծ-  
քում պիտի կաշկանդուի. Նա ամեն տեղ պիտի  
մտնի, գերդաստան, դատարան, ատեան, ապա-  
րանք ու խրճիթ, ամէն տեղ պիտի թափանցէ։  
Մի վայրկեան հանեցէք կրօնից սէրը, և դուք  
մի անհուն դատարկութիւն կունենաք, արեան  
գետերի մի անվերջ հոսանք՝ հրեշտակ մարդուն

արիւնըռուշտ զայլ դարձած, ատելութեան խաւարը ձեր հոգու վրայ իջած:

Քրիստոնէական սէրն առ մարդ և առ Ըստուած՝ անխղելի շղթայով են կապուած. չկայ ճշմարիտ սէր առ Ըստուած առանց սիրոյ առ մարդ: Փրկիչն Յիսուս մարդկային գերազանց կողմերի մարմնացումն է. կարելի չէ Յիսուս սիրել, երբ մարդն ես ատում, և ընդհակառակն:

Եյս ամենից յետոյ յորդորում եմ ձեզ. վառ պահեցէք ձեր հոգու մէջ սէրն իբրև սրբազան զոհի նուիրական հուր, վարժուեցէք այդ սիրուն ու կհամոզուիք լժէ եթէ ձեր կենաց գրքում կայ մի փայլուն երես, որ սիրտն անհուն հրճուանքով է լցնում, այդ այն վայրկեաններն են, երբ դուք Յիսուսի սիրովն էք սիրած:

Մայրէր, երբ ձեր գլուխը ծոխ ձեր հոգու հատոր զաւակի օրօրոցի վերայ և ժպիտն ու համբոյր կաթին մանկան վարդ երեսն ի վար, հետն էլ «սէր» շնչացէք մատադ ականջին:

Երիտասարդ, երբ սրտիդ ու մտրիդ ընկերին հանդիպես ու կարօտապին կերպով զըդուիք զիրար, շնչիր «սէրն է այս»:

Հայ մարդ, երբ ազգակցիդ խոցերի վերայ ճակտիդ քրտունքն ու աշքիդ ցողը թափուի ու

լուանայ, միսիթարուիր ու կարդա «սէրն է այս»:

Հայ ծերուկ, երբ լայնարերան գերեզմանի քովը կանգնած աշրդ յառած դէպի սիրապսակ խաչն Յիսուսի, որից յոյսերի մի առատ ցող է իջնում կուրծքդ ու հանգյնում այնաեղ մահու տագնապը, շնչար գերեզմանից հեռու կանգնած սերնդին «սէրն է այս»:

Երբ ապաշխարութեան օրերում ձեր աշքերը սևեռուին կարմիր խաչափայտին, թող ձեր մրմունջն ու աղօթքն այս լինի՛ Տէր իմ Յիսուս, Սէր իմ Յիսուս, նկ, նկ, սիրովդանհուն տիրէ հոգուս:

---

Բ.

ԲԵՐՈՅՑԱԿԱՆ ԱՐԻՈՒԹԻՒՆԸ

«Տէր լոյս իմ և կեանք իմ, ես յումմէ՞ երկեայց.  
Տէր ապաւէն կենաց իմոց, ես յումմէ՞ դողացայց».  
Սադ. իջ. 1.

Ուր ես երգեցող մարդարէի անուշիկ քընար, ուր ես. Քրիստոնէութեան յաղթանակի ժթ. դարն է, գիտութեանց գարունն է այժմ. քրիստոնէական բարոյականի ու մարդկային ի-

մաստութեան անուանը ամեն օր, ամեն ժամ,  
ամեն վայրկեան տօն է կատարուամ, բայց դու  
լուռ ես, հրաշալի քնար. քո ձայնիդ ալիքը չի  
հնչում լերանց բարձունքում, դու չես անցնում  
ու արձագանք տալիս պանծացող սերնդի դա-  
տարկ կրծքում. «Տէր լոյս իմ և կեանք իմ, ես  
յումմէ երկեայց. Տէր ապաւէն կենաց իմոց, ես  
յումմէ դոդացայց»:

Քրիստոնեայ հայ եղբայրներ, հերոսական  
մի ձայն է այս, աներկիւղ համարձակութեան  
մի արձագանդ, որ սկիզբն է առնում մի ան-  
ընկճելի սրտից, սահում, անցնում է նիւթա-  
պաշտութեան մութ-մութ ձորերից, վեր ել-  
նում դէպի կապուտակ կամարն ու իւր ետեից  
դէպի վեր քաշում մարդիկ ու ազգեր։ Այդ  
ձայնի նշանաբանը բարոյական արիութիւնն  
է, քնարի այդ ոսկեղէն լարը բարոյական  
աներկիւղութիւնն է:

Բարոյական արիութիւնը սովորական ա-  
րիութիւն չէ. աներկիւղ ու համարձակ է վայ-  
րի գաղանը, ինքնապաշտպանութեան զգաց-  
մունքը եռում է նորա մէջ. թշնամու ձայնը  
խեղգուում է նորա ձայնով, թշնամու հարուած-  
ները իւր հետ մէկտեղ շատ անդամ նորա ոտից  
կոխանն են դառնում. Դա արիութիւնն է, բայց  
դա չէ բարոյական արիութիւնը:

Աներկիւղ ու համարձակ է բարբարոսը, քրիստոնէութեան ու ճշմարիտ պիտութեան լոյսից զուրկ վայրի մարդը. Նորա հրոսակներն առջևից մահ, ետեից աւեր ու սարսափ են տարածում. Դա արիութիւն է, բայց դա չէ բարոյական արիութիւնը:

Աներկիւղ ու համարձակ է նաւապետը. տեսէք, որոտում է երկինք, արել ծովի ետեն է անցել, հեղեղ, կարկուտ ու կրակ է ափում երկինք խաւար ծովի վերայ. դզրդում է ծով, նորա կրծքում անդունդներ են բացուում, մահանոտ ալիքները դէզ-դէզ զրոհ են տալիս, բաղխում են իրար. ծովը լայն բացուած զերեզման է դարձել: Սակայն նորա վերայ շըրջում է նաւը: Վերից երկնքի հարուած, վարից ալիքների բաղխում. «անձնատուր, անձնատուր» են աղաղակում. բայց նոքա վշրուում են նաւի հպարտ կրծքի և կողերի վերայ: Նորա խելում կանգնած է մի յանդուզն մարդ, աներկիւղ ու համարձակ վարում է նաւը, ոլատուում է ալիք, արհամարհում խաւար անդունդներ և յառաջ լողում. լուսաւոր մարդու միտքը շրջում է ծովերի վերայ: Դա էլ արիութիւն է, բայց դա էլ չէ բարոյական արիութիւն:

Արիութեան այս տեսակը ինքնապահպանութեան զգացմունքից է բղխում. բայց ո՞ի-

թէ մարդու գերազոյն կոչումը, գերազոյն նպատակը միայն իւր անձի մէջն է. մի՛թէ նիւթապաշտութեան արծաթի հանքերումն է թափնուած մարդու կենաց գաղտնիքը: Եթէ այո՛, հապա ինչու կամայ ակամայ մեր ոտքերը ծունկ են իջնում, մեր բազուկները տարածուում այն սրբոց, այն նահատակաց, այն հերոսների յիշատակի առջե, որոնց հարստութիւնը դառն աղքատութիւնն էր, որոնց փառքը իրենց փշեայ պսակն էր, որոնց սուրը աշխարհի անարդարութիւնը շանթող լեզուն էր, որոնց մերկութեան ծածկոյթը իրենց մարմնի կարմիր արիւնն էր, որոնց հանգիստը գերեզմանն էր:

Մի անպղտոր հայեացք ձգեցէք քրիստոնէական հաւատոյ դաշտի վերայ ու ճշմարիտ հերոսները տեսէք: Տեսէք մի չնաշխարհիկ Սուրբ Ստեփաննոս, մի մատաղ սարկաւագ. Նորա վերայ հակառակորդները կարկուտի պէս քարեր են թափում, քարկոծում. Նա նոյն անխոռով ու հոգւով հանգիստ Ստեփաննոսն է, աշքերը դէպի երկինք դարձրած: Նորա կենաց գաղտնիքը իւր մարմնից դուրս է:

Տեսէք մի հսկայ Պօլոս, երկնային գաղափարների գիրքը կրծքին սեղմած կանգնած է հեթանոս աշխարհի հրապարակում: Նիւթապաշտ հեթանոսութեան հարուած մնաց, որ չըթափուէր

այդ հսկայի վերայ. սակայն հարուածող հեթանոսութիւնն ընկաւ, հսկայ Պօղոսը կանգուն մնաց:

Տեսէք Հայոց աշխարհի փառաց ու մեծութեան անսասան վկայ Լուսաւորչին՝ Հայոց աշխարհի կրծքումը կանգնած Մեծ Գրիգորին, որի առաջ ամբողջ հայութիւն ծունկ է իշնում ու համբուրում ո. Նշխարներ. Հայոց 1600 տարեկան Ս. Տաճարը Լուսաւորչի աղքատութեան, շարչարանաց, տառապանքների յաւերժական վկան է. Նշխարներն, Նշխարներն անդամ փըրկարար, սուրբ, հրաշագործ ու կենագործող են:

Արդ, այս սրբերը, Նահատակների գունդը և մեր երկրպագութիւնը վկայ են, թէ մարդու վերագոյն նպատակը իւր անձի մէջը չէ. Նորան հասնելու ուղիղ ճանապարհը բարոյական արիութիւնն է, մի արիութիւն, որ մարդու բարոյական պարտականութիւնիցն է բղխում, մի սրբիչ, մաքրիչ հուր, որ մեր օրերում դրժքաղդաբար Նիւթապաշտութեան անձրեին է բռնուել: Ո՞վ կուրանայ քաղաքակրթութեան քարիքը, բայց և ով կհամարձակուի քաղաքակրթութեան ստեղծած վախկոտ քնքշութիւնը, հիւանդոտ անարիութիւնը պաշտպանել: Նախ սուրբ գիրքը թող խօսի:

Եհովայի հրամանով արին Մովսէս Արնասարն է բարձրացել, որոտացող Աստուծուց

պատգամներ առնելու. Նիւթապաշտութեամբ  
զեղուն Խսրայէլը մահու սպառնալիքով պահան-  
ջում է Ահարօնից ոսկի հորթ ձուլել և զայն  
աստուած դաւանել: Գաղափարը երկիւղով ծած-  
կող անարի Ահարօնի ձեռքերը հորթ են ձու-  
լում մոլար ամբոխի համար: Ահա իջնում է  
սարից Մովսէս, բարկացայտ աչքերը սեսում  
կուռքի և ամբոխի վերայ, նախատում երկշոտ  
առաջնորդին, վշրում է կուռքը, և ոչնչացնում  
արձանացած մոլորութիւնը:

Մի վայրկեան թօթափենք մեր արտեա-  
նունքներից արծաթի փոշին, բարձրանանք  
իւրաքանչիւրս մեր Սինա սարը, կապուտակ  
երկնքի խորհրդաւորութեան մէջը թաղուինք-  
ու մի հայեացը ձգենք լերան ստորոտում փլո-  
ւած աշխարհի վերայ: Տեսէք հրապարակի վե-  
րայ կանգնած մի ոսկի հորթ. Աստուծոյ անու-  
նը դարձեալ կայ, պաշտամունքը դարձեալ կայ,  
բայց այդ անունը, այդ պաշտամունքը ոսկի  
հորթին է տրուում: Մովսէն հեռու է, իսկ  
Ահարօն, մահից վախեցող Ահարօն, Մովսիսի  
բարոյական արխութիւնը չունի յանդիմանելու  
արծաթմոլութիւնն ու մոլորութիւն, և յօժա-  
րում է հորթ ձուլել, որ իւր կեանքն ազատէ-  
ել որբան անթիւ են մեր օրերում գաղափարն  
անձի երկիւղով ուրացող Ահարօններ:

Մտէք ձեզ պատահող առաջին աղքատիկ  
հիւղը. մերկութեան, քաղցի, անձրևող վշտերի  
թագաւորութեան սահմանն էք մտել: Ելէք, ան-  
ցէք բարեգործ մեծատունների բնակարաններն  
ու վաշխառուի տունը մտէք. քաղաքակրթու-  
թեան բարեաց հեղեղը ողողել է այս տուն.  
շարք շարք սնդուկների մէջ դեղին մետաղն է  
խօսում. այդ ձայնը վաշխառուի հոգին է. նո-  
րա ամէն մի ոսկու մէջ կողոպտուած աղքատի  
մի կուց արցունքը կայ, որ ի մի հաւաքուելով  
արտասուաց զետ կդառնայ: Բայց ինչպէս հա-  
մարձակութինք աղքատի համար մեծատան սիր-  
տը ցաւեցնել. չէ որ նա մեզ պէտք կըդայ մի  
օր: Ո՛չ, հազար ոչ, մենք այդ չենք կարող ա-  
նել, մեզ պակասում է բարոյական արիութիւն:  
Որքան և քիչ, բայց գարձեալ շատ են այն  
կտրիճները, որոնք ըմբռնում են մարդկային  
բարձր կոչումը. բայց ինչպէս քարողեն դեղե-  
ցիկն ու վայելուչը, ինչպէս դէմ գնան նիւթա-  
պաշտութեան զետի հոսանքին. չէ որ աշխարհը  
կծաղրէ նոցա, չէ որ ծանակ կդառնան: Քա-  
ղաքակրթութեան հիւանդոտ վախը խեղգել է  
արիութեան ողին: Բայց սիթէ աշխարհը միշտ  
չի ծաղրել սրբութիւն, անաղարտ անուն, ան-  
նկուն հերոսութիւն, վախսկոտ զաղափարական-  
ներ, և միթէ անհաւատների ծաղրից կորել է

հաւատը, չբացել առաքինութիւն, մեռել է  
արդարութիւն:

Ա'րդ, կարող է նիւթապաշտութեան վա-  
խից գողղողացող հոգին գաղափարական զուար-  
ճութիւն զգալ, հոգւոյ յարատև երջանկութիւն  
վայելել. կարող է մահուանից աւելի զօրեղ Աս-  
տուծով պարծենալ—«Տէ՛լ լոյս իմ և կեանք իմ,  
ևս յումմէ երկեայց...»

Բարոյական վախկոտութեան ծառը եսա-  
կանութիւնն է, որի վերայ նիւթապաշտութիւն  
է ծաղկում. եսականութեան ծառն արմատա-  
խիլ անող փրկարար հողմը ճշմարիտ մարդա-  
սիրութիւնն է, որի հովը պարտաճանաչու-  
թեան անոյշ բուրմունքն ունի. իւր բարոյական  
պարտքը հասկացող մարդը վախ չունի, վասն  
զի իւր կենաց գաղտնիքը իւր անձից դուրս է:

Բարոյական արին այն մարդն է, որ գի-  
տէ տանջուել ու կռուել, որ ընդունակ է չա-  
րութեանը պատերազմ հրատարակել, իւր ան-  
ձովը պաշտպանել երկրպագութեան առարկան.  
Նա այն մարդն է, որ գիտէ ոգեսրուել երկնա-  
ւոր զինուոր վարդապետի խօսքերով. «Ո՛չ եկի  
արկանել խաղաղութիւն, այլ սուր. հո՛ւր եկի  
արկանել յերկիր»:

Բարոյական արին այն մարդն է, որ պար-  
տականութեան զգացմունքի հրապոյրով յանի-

բաւի տանջուող ընկերին օգնելու սիրով կռուի դաշտն է եղնում ու մոռանում է իւր անձի զրժքաղղութիւնը, գաղափարի առաջ նսեմանում է անձնական երջանկութեան զգացմունքը:

Եւ վերջապէս բարոյական արին է նա, ով պատրաստ է իւր անձը տալ իրրե փրկանք շարութեան ձեռքը գերի ընկած առաքինութեան, հաւատալով՝ որ չի մեռնում, հաւատալով թէ «Որ կորուսցէ զանձն իւր, գտցէ զնա»:

Բարոյական արիութեան համար նիւթական կապ չկայ. անարդարութեան երեսին ապտակ հանողն է նա, իւր հացի, իւր բարիքի, մինչ իսկ իւր կեանքի գնով։ Նորա ոյժը, բարոյականութեան աղբիւրն Աստուած է, նորա փառքը պարտաճանաշութեան սէրն է. խաւար հոգիների մէջ նորա լոյսը Տէրն է, խաւար թըշ-նամիների մէջ ապաէնն Աստուած։ Նորա յաղթական երգը, աներկիւլ համարձակութեան սաղմոսը, հերոսական ոգու շարժիշ մեքենան, մխիթարիշ մրմունջը արիասիրտ մարդարէի հոգեբուլիս աղօթքն է. «Տէր լոյս իմ՝ եւ կեանք իմ՝ ես յումնէ երկեայց. Տէր ապաէն կենաց իմոց, ես յումնէ դողացայց»:

**Փ.**

**Ն Ա Խ Ա Ն Զ Ի Դ Ե Մ**

«Զի ուր հեռ եւ նախանձ, անդ եւ ան-

կարգութիւն եւ ամենայն իրք չարք».

Յանք. Գ.

«Գիշերն մերժեցաւ և տիւն մերձեցաւ...  
ով մարդ, թօթուէ քունը աչքերիցդ, ոտքի ել,  
զարնան առաւօտ է, աղօթարանը կրակ է  
կտրել, հնոց դարձել։ Վեր կաց, լուսաբացի  
անուշիկ զեփիւռը թող զայ, շոյէ ճակատդ, վեր  
բարձրացնէ ծանրացած արտևանունքներդ, բա-  
ցուին աչքերդ ու տեսնեռ Ստեղծողի դաստա-  
կերաը—Բնութիւնը, որ քո օրօրանդ է։ Հո-  
գուդ աչքն էլ բաց, հերիք է ժանդուած փա-  
կանքներով կաշկանդես միտրդ. բաց զայն, հրա-  
շալեաց բնութիւնը իւր հովով սթափեցնում է  
քեզ, ետեէն լուսոյ ճառապայթ է զրկելու իւր  
կտալուտակ ծոցէն, որ սիրտդ մտնի, խոհեր  
յուղէ այնտեղ և դու լուռ ու մտախոհ անձնա-  
տուր լինիս երկնից լապտերի լուսով քննելու  
բնութիւնն ու քեզ, որպէս զի կատարուի ամէ-

Նէն դժուար պատուէրն իմաստոնի թէ «Ժանէր զքեզ»։

Ծանիր զքեզ. որչափ դժուարին բան, որպիսի խորին գիտութիւն։ Իրեն մի մատաղ տունկ, իրեն մի անզօր մանուկ աշխարհ ես գալիս մի քանի տասնեակ տարի ճանապարհորդելու։ Ուղեգնացութեանդ մէջ հսկայական գործեր ես կատարում. փոքրիկ գլխիդ մէջ ժողովում ես անցած դարերի իմաստութիւնը, երեակայութեանդ մի թռիչքով անտեսանելի աշխարհներն ես թեակոխում։ Դու հանճար ես, դու հերոս ես. դու հրաշալիք։ Բայց... բայց յանկարծ առջևդ մի փոս է բացւում ու քեզ, նոյնքան անզօր, նոյնքան տկար ու թոյլ հսկայիդ կուլ է տալիս։ Այսպէս դու հրաշալիք ես և դու դատարկութիւն, դու հսկայ ես և դու խոկ մարմնացեալ անզօրութիւն, դու ամենայն ինչ ես և դու ոչինչ ես։

Երբ կեանքով լի ու պճնուած՝ արագավազ կառքով սլանում ես կեանքի անհարթ ասպարիզում—դու զերազանց զարդն ես ընութեան, երկրի ծաղկունք. քեզ են նախանձում, երկնից աստղեր խէթ աշքովնայում։ Իսկ երբ կառքիդ անիւը սունակից դուրս է թռչում ու քեզ ջարդուած—դու նոյնն ես, ինչ որ ձեռքի մէջ տրորուած վարդը, դու զեղագուրկ տեղեկութիւն մ'ես։

Երբ գիտնականի տոկունութեամբ մտքիդ  
լապտերի լուսով մի փոքրիկ ճանձ ես ուսում-  
նասիրում՝ համրում ես մէկիկ-մէկիկ կազմից  
յօդերն, արիւնաբաշխական երակների ու դար-  
կերակների դարմանարուեստ վտակների ուղ-  
ղութիւնն, առատութիւնն ես չափում, կշռում  
—դու գերազանց հնարագէտ ճարտարապետ  
մ'ես։ Իսկ երբ փորձում ես քան մեր աշխարհն  
առաւել խոչըր աշխարհները տեսնել ու չափել,  
անգիտութեան վարագոյրը՝ վակումէ հայեացքդ,  
—դու անփորձ համբակ մ'ես, ենթադրութիւնն-  
երի բարձր պարիսպները խարխափող միջկոյք։  
Երբ դու մի հատիկ առարկայ մասնիկների  
բաժանելով անվերջ ու անտեսանելի քանակու-  
թիւն ես դտնում—դու ամենաթափանց ճառա-  
գայթ մ'ես։ Իսկ երբ քո ծագման ու վախճա-  
նի վերայ ես մտածում—դու անթափանց խա-  
ւար մ'ես։

Տիեզերքում ուր է քո տեղդ, ուլ մարդ, և՝  
հրաշալիք ես և՛ ոչնչութիւն. բայց ոչ մէկն ես և  
ոչ միւսը. ուր է քո գահդ արարածների շարքում։  
Թողնենք արարինն ու մարդու հոգեկան  
աշխարհի կենդրոնները թեակոխենք. տես-  
նենք նոյն զու զադիպութիւնը չէ թագաւորում  
այստեղ։

Եղբարք իմ սիրելիք, իմաստութեան ոչ

մի թանգարանում այնքան պայծառ, այնքան  
պարզ, այնքան մեկին հանդիսացած չէ մարդը  
իւր վեհութեամբն ու ստորութեամբ, իւր սրբ-  
րութեամբն ու պղծութեամբ, իւր վեհանձնու-  
թեամբն ու չարութեամբ, իւր չքնաղ վայել-  
չութեամբ ու իւր զազիր հակումներով,—այս,  
ոչ մի տեղ, ինչպէս ո. Աւետարանի մէջ, ինչ-  
պէս Փրկիչ Աստուծոյ երկրաւոր կեանքի վեր-  
ջին օրերի հանդիսարանում։ Այսօր այդ օրերի  
նախադուռն է։ Դուք փոքր իշատէ գիտէք այդ  
չքնաղ կեանքի նկարագիրը, վասն զի քրիս-  
տոնեայ անունն էք կրում, աւստի ևս միայն  
կհամեմատեմ այստեղ վսեմութիւնն ու անկու-  
մը մարդուն։

Յիսուս շրջում է աւերակ սրտերով ցա-  
նուած դաշտերն չրէաստանի, բեկորներ ժողո-  
վում, սրտեր շինում։ Թպիրները խորհում են ե-  
երկնաւոր բրտի մարմինն էլ աւերակ դարձնել։

Հովուապետն Յիսուս սիրոյ սընդի ձայնով  
է առաջնորդում հօտը. օրէնսգէտ վարիսեցիք  
ատելութեան թոյն են նիւթում նորա համար։

Թողութեանց բժիշկն երկնաւոր յանձնիս  
անրարոյ կնոջ մարդ է տեսնում, թեէն բռնում,  
վեր է հանում. թերութեանց մէջ թաղուած  
վարիսեցիք սխալական կնոջ վերայ կորոտեան  
քարեր են բարձրացնում։

Յիսուսն իրին սրտերի թագաւոր Երուսալէմ է մտնում. ամբոխն ովսաննա է կանչում, կարծելով թէ նոր թագաւորը սրով է աշխարհ գալիս: Յիսուսն ուզում է սրտերի ազատութիւն քարողել. ամբոխն ոյժ է պահանջում, առանց հասկանալու թէ սրով խլուածը, սրով կպահուի միայն և սրով էլ յետ կխլուի:

Յիսուսն անդամալոյծին է բժշկում. անդամալոյծը նորան ապտակ դարնում:

Յիսուսն յաւիտենական կեանք է խոստանում սիրելի Յուդային, Յուդան 30 արծաթով ծախում է այդ կեանքն ու վարդապետին:

Յիսուսն իւր հայրենիքի ախտերը սիրոյ սրբիչ ցօղով է սրսկում. հայրենիքը նորան փշով պսակում, ապտակով ձագկում:

Յիսուսն իւր հայրենի տաճարում զոհ է բերում իւր սիրտը. ամբոխը տաճարի դրան լուսանքներ է թափում նորա գլխին:

Յիսուսն ուզում է խարխուկ Երուսաղէմը շինել, ամբոխը նորա մարմնաւոր շէնքը խաչի վերայ զարկելով է փշրում:

Տեսաք ի՞նչ է մարդը, հրեշտակ և դազան, լոյս և խաւար. մի թափանցիկ պարզութիւն, մի անթափանց պղտորութիւն. մի ծագկավառ լեառն, մի մթին ձորակ. մի անվերջ անուշ-հոտութիւն, մի մշտական դարշահոտութիւն.

մի գիրկ վարդ, մի դաշտ փուշ. կեանք և մահ:

Արդ, խորհրդածութեան առնենք. ո՞րն է այն աղբիւրը, մարդու սրտի մէջ, որ թոյն է ժայթքում ու թունաւորում սէր ու խաղաղութիւն բղխող աղբերց անուշահամ վտակը: Այդ թունահոս աղբեր անունը նախանձ է:

Բայց ի՞նչ է նախանձ. որոշակի պատասխանել կարող չեմ, վասն զի ինչպէս մի փոքրիկ իր գիշերուայ անթափանց վարագուրի ներքե՞այնպէս ծածկուած է նախանձի արմատը մարդու սրտի խորքում: Սակայն չեմ հրաժարուի բանալ ձեր մտքի առջե այն, ի՞նչ որ նշմարելի է նախանձի ներքոյ:

Մարդս մէկ անբացատրելի հակումն ունի ուրիշի երեակայութեան մէջ ապրելու, մերձաւորի հիացմունքը շահելու. այդ է պատճառ որ շատ անգամ մարդիկ կամաւորութեամբ զոհւում են, որ մերձաւորների սրտումն ապրեն: Կենդանի մնալու և այլոց սրտերումն ապրելու համար շնորհք, շնորհալիութիւն պէտք է ունենալ, վասնզի երեակայութեան մէջ շնորհն է անմահանում, երեակայութիւնը ոյժին է երկրպագու, իսկ շնորհն ոյժ է, մտաւոր ոյժ, բարոյական ոյժ, գեղարուեստական ոյժ: Այս շնորհներից բաժին ունեցողը անկասկած է, որ այլոց սրտերում պիտի ապրի, ուստի ապրում

ու գործում է շիտակ, առանց կեղծիքի։ Այլ կերպ  
են վարուում չնորհազուքի մարդիկ. Նոքա այլոց  
սրտերում ապրելու համար աշխատում են խոր-  
տակել այն սրտերում չնորհալու գեղեցիկ արձանն  
և նորա փոխարէն իրենց անտաշ, կոպիտ կոճ-  
դը դնել։ Ահա անշնորհքութեան այս գիտակ-  
ցութիւնից ծագում է չարախօսութիւն, զրալար-  
տութիւն և կեղծաւորութիւն։ Չարախօսում են  
չնորհքը, որ անշնորհքութիւնը դիրք ունենայ,  
զրալարտում են ոյժը, որ անոյժը ոյժով երեայ,  
կեղծում են իրենց սիրտը, որպէս զի այլոց  
առջև ձեանան այնպէս, ինչպէս որ չեն խկա-  
պէս։ Գիտէք դուք մի մեծ մարդ, չնորհքներով  
լեցուն որ նախանձէր, զրալարտէր, կեղծէր և  
չարախօսէր, երբէք, անշնորհքների, տկարեե-  
րի, սինկքորի վահանն են դոքա. իսկ չնորհքն  
յաղթական է, ինքն է իւր վահանն աւ ասպար.  
ուստի չնորհալին մաքառում, ընկնում է, բայց  
չի նախանձում, չի ստորանում։

Այսպէս նախանձը անշնորհքութեան և ան-  
զօրութեան բերքն է, իսկ կեղծիքը, չարախօ-  
սութիւնը, զրալարտութիւնը նախանձի դէնքերն  
են։ Նայեցէք չնորհաց աղբիւր Փրկիչ Յիսուսի  
վերայ ու տեսէք նորա վսեմութիւն, խորհեցէք  
փարիսեցոց դարաց, սինկքոր ամրոխի, Յու-  
դայի վերայ ու տեսէք ստորութիւնը մարդու

որ անշնորհքութեան է նշանակ, որ վախկոտ  
նախանձի է քերք:

Ծնորհազուրկ նախանձոտի հոգին հասկա-  
նալու համար մի օրինակ պատմեմ: Արծուին  
մէկը իւր հզօր թերով թռչում, սաւառնում  
էր երկնից այն բարձունքներում, ուր փայլակ-  
ներ են ծնանում: Հանգիստ առնելու համար  
նա թողեց իւր անսահման ասպարէզն ու կա-  
պուտակ երկնքից գլափի փար սլացաւ և կանգ-  
նեց զիւղի մի տան ցանկապատի վերայ, այն-  
տեղից թռաւ միւս ցանկապատը: Նոյն բակում  
մի թխամայր հաւ իւր ձագերով հպարտ-հպարտ  
զրունում էր. նա տեսաւ արծուի մի պատից  
միւսը թռչելիս և դառնալով հարեան հաւին  
ասաւ հեգնաբար. «Քա, սանամայր. մի՛թէ ար-  
ծիւներն արժանի են այդքան գովասանքի, տես  
ինչքան ցածր են թռչում. մի՛թէ մենք հաւերս  
պակաս ենք արծիւներից, չէ որ ես էլ կարող  
եմ մէկ պատից միւսը թռչել»: Հաւի խօսքերը  
հասան արծուի ականջին. նա հասկացաւ նա-  
խանձոտութեան ձայնն ու պատասխան տուեց.  
«Ե՞հ, աղէկ, կռկռան հաւիկ, իրաւ է որ ար-  
ծիւները երբեմն մինչև հաւերի ցածրութեան  
են իջնում, բայց երբ ես լսել ու տեսել որ  
հաւերն արծիւների բարձրութեանը համնէին»:  
Ահա նախանձ, ահա չնորհքի ուրացութիւն:

Աւաղ, որչափ առատ է նախանձի հողը մարդկանց սրտերում, որչափ անհուն նորա ծնունդ զրպարտութիւնը։ Նորա քանակութիւնն իմաստուն ժողովողն է կշռել. «Դարձայ և արեգակի ներքեւ տեսայ ամէն տեսակ զրպարտութիւն, զրպարտուածների արտասուզ և ոչ ոք կար նրանց մխիթարող. իսկ զրպարտովների ձեռքում ես միայն բռնութիւն տեսայ ու երանի տուի այն մեռելներին, որոնք մեզնից յառաջ հեռացել են այս աշխարհից, բայց աւելի երանի տուի նոցա, որոնք ոչ կենդանի են և ոչ մեռած, այլ աշխարհք անզամ չեն եկել, որ չեն տեսել շար արարածներին արեգական ներքոյ. և տեսայ մարդկանց աշխատանքն ու կուրութիւնը. մերձաւորների մէջ նախանձ տեսայ, որ ունայնութիւն է և յօժարութիւն հոգւոյ։ Ես տեսայ թէ ինչպէս անզգամը պոկում էր իւր միսն և ուտում»։

Արդ, եղբարք իմ ի Քրիստոս, սիրելիք և անձկալիք, մարդկային սրտի վերայ հրաւիրեցի ձեր ուշադրութիւնը Փրկիչ Յիսուսի կեանքի օրինակներով ու ցոյց տուի ձեզ այն օձը՝ նախանձը որ կծիկ է դարձել մարդու սրտի լաւագոյն անկիւնում, որ և Աստուծոյ սեղանին է տեղի։

Ո՞վ կտայ ինձ այն թովիչ ձայնը, որ թո-

վէի այն օձն ու մեր սրտերից դուրս քաշէի:  
Մէկ գեղ կայ միայն. դիմել չնորհքների բաշ-  
խող Աստուծուն սրտաբուղիս աղօթքով և աղեր-  
սել որ նա չնորհաց կաթիլներ սրսկէ մեր սըր-  
տերում ու ցամքի, շորանայ նախանձի օձն այն-  
տեղ։ Մի կասկածէք թէ անշնորհքն աղօթելով  
չնորհք չի առնի. հազարաւոր են օրինակներ  
ուր նախանձոտ անշնորհքութիւնը չնորհալի  
վեհութեան է փոխուել հաւատով, ջերմ աղօթ-  
քի միջոցով։

Ս. Յակոբոս առաքեալի խօսքով եմ ասում  
ձեզ, եղբարք, «զի ուր հեռ և նախանձ, անդ  
անկարգութիւն և ամենայն իրք չարք»։

Մարմնացեալն Աստուծ գալոց օրերի  
չնորհիւ լցնէ մեզ իւր չնորհքով որ մեզ ճանա-  
չենք և հասկանանք թէ նախանձի հողը հերոս  
չի բերի, նախանձոտ ազգը կեանքի զարուն  
չունի։ Ամէն։

---

Պ.

«Տէր, բարւոք է մեղ աստ լինել»:

Մար. Ժէ.

Քրիստոնեայ հայ եղբայրներ.

Ի՞նչ փափագով, ի՞նչ մաշող կարօտով,  
ի՞նչ զեհ ոգևորութեամբ է հնչում Տիրոջ առա-  
քեալի այս խօսքը հաւատով քրիստոնէի ական-  
ջին. «Յարւոք է մեղ աստ լինել»:

Մի փոքր յառաջ հայրենիքից ու ազգա-  
կաններից հալածեալ Յիսուսը. մահուան ստուե-  
րով պատաժ ձորակով էր անցնում և իւր շար-  
շարանքի ու դատապարտութեան մասին խօ-  
սելով՝ վշտերի ծով էր դարձնում սիրեցեալ ա-  
շակերտների սիրտը: «Քաւ լիցի քեզ Տէր, մի  
լիցի քեզ այդ» սարսափահար Պետրոսն էր աղա-  
ղակում: Ինչպէս, ինչպէս կարելի է, որ աս-  
տուածորդին, աշխարհի թագաւորը մեղաւոր  
մարդկանց դատաստանն երթայ և ի խաչ հան-  
ուի մի մեղապարտի նման: Տարակոյսների ալի-  
քը իւր թերի վերայ էր առել առաքեալներին,  
որոնք՝ անղեկ առագաստներից զուրկ նաւակի  
նման, խաղալիք էին դարձել նոցա կատաղի  
փրփուրներին: Նա, որ ամենքի կեանքն է, նա

որ յաւիտենից թագաւորն է, ի՞նչպէս պիտի  
քաժին չունենայ այս հրաշալի աշխարհից, այս  
բնութիւնը, որ իւր չնչովն է ծաղկել, այս գեղն  
ու շուք իւր հրամանով են կանգնել, միթէ մահ  
պիտի բուրեն նորա համար. ի՞նչպէս, ի՞նչպէս  
կարելի է:

Խեղճ առաքեալներ, որոց համար դեռ աշ-  
խարհի վարդը չէր թառամել, որոնք քաղցրու-  
թիւնը դեռ կեանքի աղրիւրիցն էին ծծում,  
որոց համար դեռ գաղտնիք էր մի ուրիշ վեհ,  
սուրբ, նուրբական կեանք: Ո՞վ պիտի վանէք  
նոցա մտքերն յեղիեղող հողմը, ո՞վ պէտք է  
փարատէք նոցա տարակոյսը, եթէ ոչ նա, որ  
կարողն էր մրրիկներին հրամայել «դադարեցէք»  
և դադարում էին:

Ահա, նա կեանքի խաբուսիկ հրապարնե-  
րից, կեանքի հովտից հանելով հսւատարիմնե-  
րին բարձրացաւ մի բարձր, առանձին լերան  
պլուս ու նստեց: Որքան շքնաղ երեաց այն  
բարձունքից Աստուծոյ երկինքը, կապուտակ կա-  
մարն իւր մշտալառ լապտերներով տիրեց նո-  
ցա սրտին. այն ի՞նչ հրաշալիք էր, այն ի՞նչ  
հրապար բարձր լերան զլիխին: Իսկ վարը. վա-  
րը լերան ստորոտում խաւարի մէջ կորել ու  
ծածկուել են ապարանքներ, լոել են զուար-  
ճութիւններ, գեղ, փայլ ու շուքը կեանքի: Որ-

քան տկար է նոցա լոյսը լերան լոյսի առաջ,  
որքան կարճատե։

Ահա այդ լերան գլխին առաքեալների սովորական վարդապետը փոխւում, լոյս է առնում, լոյս է դառնում, լոյս է տալիս. արեգակի պէս երեսը, ձիւնի պէս հանդերձները խըտդրտում են մահկանացու աչքեր և նոքա երեսն ի վայր զետին են փուլում։ Մարգկային աղօտ լոյսին, կեանքի աղօտ լոյսին միայն վարժ աշքը անկարող է տանել երկնային լոյս, իսկական զաղափարական լոյս, ինչպէս բանտից ելած մարդը վառ արեի առաջ։ Եւ ահա այս նոր ու անծանօթ լոյսի քաղցր տպաւորութեան տակ ոգեորող Պետրոսը հիացմունքի մէջ ձայն է տալիս. «Տէր, Տէր, բարւոք է մեզ աստ լինել»։

Ի՞նչ էր այս ոգեորող ձայնը, ի՞նչ հրաւէր է կարգում Թափոր լերան զաղաթից արձակուած այս անոյշ հովը. մարդիկ, որ զաղափարականն ու վեհը թողած աշխարհի կեանքի ծովի վերայ կը լողաք բաց առազաստներով, դուք նաւահանգիստ չունիք, դուք հոգու անդորրութիւն չունիք, մարդիկ, որ ոսկեշատ պալատներուն երկրպագութիւն կուտաք, ու հեշտութեանց դարպաններին ուխտ կերթաք, դուք կայան չունիք, այդ ապարանքները շուտով իրենց հողաբլրի տակ պիտի առնեն ձեզ ու կորչի ձեր

անունն ու յիշատակ։ Մարդիկ, որ անկուշտ  
որսորդների նման լիռ ու դաշտ չափելով, ծով  
ու գետեր կտրելով ոսկի դէզեր կըդիզէք, դուք  
յագուրդ շունիք, դուք կարօտ ու քաղցած կը  
մեռնիք առանց ձեր բարիքը վայելելու։ Մար-  
դիկ, որ լոյսը թողած մուլժ անկիւններ սիրե-  
ցիք, դիշերը ցորեկ, ու ցորեկը դիշեր դարձու-  
ցիք, որ ձեր եղրօր աղի արցունքով, դառն  
քրտինքով յագեցաք, — ի՞նչ է, ի՞նչ է ձեր կեան-  
քը, եթէ ոչ մի անցնող ալիք մեծ ծովի վերայ,  
մի կայծ կրակ ջրերի մէջ, թօթափուած տերե  
մըրկի առաջ։ Թողէք այս ամէն կոյր հրապոյր,  
գոհացէք միայն ձեր կեանքն ապահովելու չա-  
փով ու աչքներդ դէպի վեր դարձուցէք. հոգե-  
ւոր կեանքով, գաղափարով, իդէալով ապրեցէք  
ու տեսէք որքան քաղցր է այն, որչափ լուսա-  
ւոր, որքան մօտ Աստուծոյ։

Գաղափարական հոգեւոր կեանքնէք, քրիս-  
տոնեայ հայ եղրայրներ, որ Փրկչի աշակերտ-  
ներին աշխարհից բարձրացրեց ու Թափօր սարը  
հանեց. բարձր է Թափօր սարը դաշտից այնքան,  
որքան բարձր է բարոյական, հոգեւոր կեանքը  
աշխարհի կեանքից, և ով որ այդ կեանքովն է  
ապրում, ով որ ընկերի, մերձաւորի բարիքը  
վեր է դասում քան իւր հաճոյք, նա միայն կա-  
րող է Թափօր լերան կեանքի լուսոյ առաջ խո-

նարհիլ ու աղաղակել «բարւոք է մեզ աստ լինել»։ Այստեղ օր աւուր ծաղիկ երիտասարդը կթոռմի ու դէպի հողը կլոոնարհի, աշագեղ օրիորդը իւր բոյրը կորցնելով կթորչոմի, ինչպէս խլուած վարդն արեի առաջ, հարուստ ու աղքատ անյիշտակ հողաբլրի տակ կանցնին— իսկ այնտեղ գաղափարական կեանքի լեռների վերայ բարձրացողը մահ չունի։ Մեռել են Թափօր սարի հոգեոր կեանքի զեկափարները, մեռել է Գողգոթայի կատարն իւր սուրբ արիւնով ցողող երկնային նահատակը, մեռել է Համբարձման սարից դէպի վեր ենոտ յարուցեալը։ Երբէք, երբէք, այն լեռների կատարներում անմահութեան հոտ է բուրում։

Եղբայրներ, հոգեոր, իդէալական կեանքի յաղթանակի յիշատակ է այսօր, անմահութեան առաջին դասն է Փրկչի այլակերպութեան այս չքնաղ տեսարանն ու հանդէսը։ Հետեինք այդ կեանքին։

Բայց ամեն աղդ, ամեն հաւատացեալ աղդ իւր Թափօր սարն ունի և ամեն տարի այդ սարի զլիսից այս ձայնն է գալիս։ «բարւոք է մեզ աստ լինել»... իսկ ձեր Թափօրն ուր է, գաղթական հայ եղբայրներ, որ լերան զլիսից անմահութեան հով է փշում ձեզ։ Կյիշէք Մայր Ալոռ, կյիշէք Հայոց լուսոյ մօր, կյիշէք ձեր պապերի սրբազն սարը, ահ, էջմիածինն է այն,

այն է ձեր Թափօր սարը, արդեօք լեռների  
շարքեր, գաշտերի տարածութիւն, ծովերի ա-  
լիք, որոնց այն կողմը թողին ձեր պապերը  
Ս. Էջմիածին, ձեզ մոռացնել տուին այն։ Յի-  
շովութեան թերերի վերայ, պանդուխտի կարօ-  
տով, արդեօք կիժռչէք երբեմն դէպի Հայոց  
Սիօնը, ուր ձեր անցեալ փառք, արդի պատիւ  
և ապագայ սոկեղէն յոյսերն ու երազներն են  
պահուած։ Ո՞հ, հայ եղբայրներ, յիշեցէք Սիօնը  
«Հարցէք զողջունէ Էջմիածնի, ոյք սիրէք զծէր»։

Բայց զիտեմ, երբ Սիօնի կարօտը զարթ-  
նի ձեր մէջ, երբ Էջմիածնի սէրը ձեր պապերի  
աճիւնից ծլի ու ձեր սիրու լցնի, կարմիր քո-  
ղով պիտի ծածկուի ձեր երեսը, ամօթահար  
պիտի կանչէք «Ախ մայրենի անոյշ լեզու, որով  
հայկական մրմունջներ էին առաքում մեր պա-  
պերը դէպի երկինք և դէպի Էջմիածին, ուր է,  
ուր կորուցել ենք մենք։ Ինչպէս հասկանանք  
Սիօնի հրաւէրը, ինչպէս մօտենանք Թափօր  
սարին, ախ ինչպէս, ինչպէս։ Ի՞նչ է քրիս-  
տոնէի կեանքը, երբ իւր աւետարանը չհաս-  
կանայ, ի՞նչ է հայ եկեղեցու ազգեցութիւնը  
եթէ հայու սաղմոսներով չհեղեղուի մարդու  
հոգին. ի՞նչ է մարդ առանց իւր ազգային լե-  
զուի, ինչպէս աստղերն ու լուսին կորցրած  
երկինք, ինչպէս լարերը կտրած անձայն նուա-

դարան, ինչպէս պատիւը ծախած անմիտ վաճառական:

Բայց եղբայրներ, նա, որ իւր փառքի ահաւորութիւնից, սարսափած առաքեալներին ձայն տուեց «յոտն կացէք մի երկնչիք», նա ինքը կրանայ ձեր լեզուն, եթէ դուք բանաք ձեր սիրտ էջմիածնի ձայնի առաջ։ Յորդորում եմ ձեզ, քրիստոնեայ հայ եղբայրներ, յոտն կացէք մի երկնչիք, արծարծեցէք ձեր սրտերում ու տներում բարոյական—ազգային գաղափարական կեանքը, սիրեցէք ուսանել և ուսուցանել մայրենի լեզուն ու մօտեցէք Սիօնի սարին, այնտեղ, այնտեղ բարւոք է մեզ լինել, այնտեղ է բղխում ձեզ համար օրհնութեան աղքիւրը, այնտեղ են ձեր փառաց յիշատակներ։ Այնտեղից ողջոյններ եմ բերել ձեզ համար, առէք ընդունեցէք այն և սիրեցէք էջմիածին։

Նա, որ բացեց իւր աշակերտների աշքերը իւր փառքը տեսնելու, նա թող բանայ գաղլթականի սրտում մոռացուած յիշատակներ։ Նա թող վեհութեան ընկերութեան լուսով լուսաւորէ մեր ամենիս սիրտ իւր փառքի և մեր ամենիս պատուի ու երջանկութեան համար։ Ամէն։

---

Ե.

«Վասն Սիօնի ոչ լրեցից եւ  
վասն Երուսաղէմի ոչ ներեցից  
մինչեւ ծագեսցի իբրեւ զլոյս  
արդարութիւն նորա եւ փրկու-  
թիւն նորա իբրեւ զփայլակն վա-  
ռեսցի»:

Եսուց ՔՅ—1.

«Սիօնի սիրու համար ես չեմ լոխ, Երու-  
սաղէմի սիրու համար ես չեմ դադարի մինչև որ  
տիրոջ արդարութիւնը լոյսի պէս ծագի, մինչև  
տիրոջ փրկութիւնը փայլակի պէս վառուի նո-  
րա վերայ». ահա Ս. Գրքի խորութեան մէջ  
պահուած հոգեշունչ մարգարէի ձայնը, որ այ-  
սօր ամենքիս ականջին հասաւ Տիրոջ տաճա-  
րում:

Երբ արտաքին աշխարհի մռայլ պատկեր-  
ներն ու երևոյթներն առաջդ են գալիս, երբ  
խաղաղ հոգիդ յուզւում է մի ներքին ալեկոծու-  
թիւնից, երբ հոգեկան ու մարմնական ցաւերդ  
գրկում են քեզ ու վերջին ժամանակ՝ ինչպէս ա-  
րագաթե թռչուն, սահում անցնում է դէմքիդ  
վերայից, երբ ամպոտ ճակատիցդ վիշտը ծան-  
րանում, կաթում, ընկնում է աշքերիդ մէջը-

թողնում ես ուրախ հասարակութիւնը, թողնում ես կեանքի գրփրացող ժխորն ու առանձնանում մի անկիւն և մուլթ գիշերից առաւել տխուր մտքերին անձնատուր լինում. դու համեմատում ես մարդն ու բնութիւն։

Եհա այս ծովը, երէկ առաւօտեան ոսկեծաղիկ արշալոյսին նորահարսի սպիտակ քողառած ու ժպտերես, արեին էր սպասում. յանկարծ փշեց մի մրրիկ, արեն ամպերից քող առաւ ու կախ տուեց ծովի վերայ. թռաւ նրա ժպիտը, անզունդից ալիքներն արձագանք տուին որոտացող ամպերին, այրիացաւ ծով ու դէսի ափերը վազելով՝ իր յուսազուրկ գլուխը ժայռերի վերայ փշերել կամեցաւ։

Դեռ երէկ կապուտակ երկնքի առջև բարձրավիղ պանծացող կանաչ վարս ծառերը իրենց կարմրաթուշ պատուղներովս. Գրքի անմահական եղեմն էին յիշեցնում։ Յանկարծ թափուեց կարկուտ, թօթափեցան պտուղներ ու այն զուգուած դառերը, ցամաքած ալիսը դարձան։

Երէկ երկինքն իմ աշքերիս մէջ կիսնդար. ես կուզեի մի թոշուն լինել ու դէպի պայծառ լուսին սլանալ, ես կուզեի մի հով լինել բարձրանալ ու մի աստղ գրկել. բայց այսօր աշքս դէպի հողը խոնարհած անկիւններն եմ փախ-

շում, ես սոսկում եմ երկնքից, նա որոտում,  
նա կայծակ է թափում երկրի վերայ, ոչ մխի-  
թարիչ լուսին, ոչ վառ աստղերի հրապոյրը կայ:  
նոյնը չէ արդեօք և մարդու վիճակ:

Տեսնում էք այս ալեոր բանուորին, որի  
փափուկ անկողինը ծովափնեայ աւագն է, որի  
հանգիստը ծանր բեռն է, որի մխիթարիչ ակըն-  
կալութիւնը՝ մահն է: Աս այն մեծատունն է,  
որի սեղանի ճոխ փշրանքով իւր նման հաղա-  
րաւորն էին կերակրում:

Տեսնո՞ւմ էք այս սեղզեստ կինը, իւր թագն  
ու պսակը կորցրած այրին, իւր գաւակների շի-  
րիմները ողբացող այս մայրը: Այս այն կինն  
է, որին ամէնքդ երանի էիք տալիս, որի զե-  
ղեցկութեանը խունկ էիք արկանում, որին  
միակ երջանիկն էիք համարում Եւայի դուստր-  
ների մէջ:

Երբ դուք անցաք պարխոպները խորտակ-  
ուած, հրաշակերտ տաճարների գմբէթները խո-  
նարհած, արքայական պալատները հողարլուր  
դարձած այն աւերակ քաղաքի մօտով, յիշեցիք  
արդեօք թէ երբեմն բաղդը իւր լայն թերթը  
բացած սաւառնում էր այն քաղաքի վերայ-  
քնակիչները քաղցր ժամում, օտարները սար-  
սափում էին նորա ահեղ պարխոպների առաջ:  
Հաղա յիշողութեան թերթով թուէք ու անցէք

անցելոյն լեռների ետևը, մտէք այն հովիտները,  
ուր երկրագործը ուրախ երգով հերկում, ցա-  
նում ու հնձում էր, լուսափրփուր գետակների  
ափերում հայրենի մարդերով ու քայլերգով վար-  
ժուող զինուորական եղբօրը ճանապարհի բաժին  
հանում։ Խսկ այժմ, այժմ նախնեաց հողի ու  
սեպհականութեան վերայ նա մի մշակ է օտարի  
շտեմարանը լցնելու, մի տառապեալ աղքատիկ  
Ղազարոս իւր խսկ պատրաստած օտարի ճոխ  
սեղանի սակաւ փշրանքներովը յագեցող։

Փոփոխական է բնութիւնը. փոփոխական  
և մարդու վիճակ. ահա այս մշտական նմանու-  
թիւնը կայ բնութեան, անհատի և աղքերի  
կեանքի մէջ։

Այսպիսի նեղութեանց ու տառապանքնե-  
րի օրերում անհատի ու շատ անգամ ազգերի  
վերայ յուսահատութեան խորշակն է զարկում.  
տեսնում է մարդ բաց երկնքի տակ անիրա-  
ւութիւն. տեսնում է իւրաքանչիւր մարդու և  
ազգի աստուածատուր իրաւանց յափշտակու-  
թիւն, ճաշակում է երբեմն նոյն խսկ վիճա-  
կակից եղբօր ատելութիւնն, կորցնում է սէրը  
դէպի ընկերն ու Աստուած, թուլացնում հա-  
ւատ ու յուսաբեկ աղաղակում «Ո՞ւր ես երկըն-  
քի Աստուած, ինչու թողիր մեղ»։

Ահա այդ վայրենին ս. Գրքի հոգին ըմ-

բռնող մարդու ականջին մարդարէի խրախուսական այս ձայնն է զալիս. «Սիօնի սիրու համար ես շեմ լոի, Երուսաղէմի սիրու համար ես շեմ դադարի ու պիտի քարոզեմ այն, մինչև որ Տիրոջ արդարութիւնը լոյսի պէս ծագի, մինչև նորա փրկութիւնը փայլակի պէս վառուի»:

Որբան խորհրդաւոր է այս խօսք. մինչդեռ հասարակ մահկանացուն ու թուլամորթ ազգերը տառապանքների առաջ կորցնում են իրենց սէրը դէպի իրենց համար նուիրական սրբութիւնները, դէպի իրենց Սիօնը, ուր ամփոփուած են փառաւոր անցելոյն յիշատակները, ուր Աստուծոյ փառքն է երկել, մարդարէն ի դէմս ընտիր ազգաց բորբոքում է իւր սէրը «ինչ կուգէ թող գայ իմ գլխիս, ես, Սիօն, Երուսաղէմ, իմ հայրենի տաճար ու քաղաք, ես շեմ դադարի քո փառքդ սիրելուց ու քարոզելուց», և այս անհօւն սէրը յոյս, յուսոյ լապտերը է վառում մարդարէի առաջ և յուսոյ թներով դէպի հաւատոյ ժայռն է թռչում. նա հաւատում է թէ յուսացալ ու սիրող մարդու հոգուց հեռու է վհատութիւն. յուսացողն ու սիրողն հաւատում է թէ «Տիրոջ արդարութիւնը լոյսի պէս պիտի ծագի, Տիրոջ փրկութիւնը փայլակի պէս պիտի երկայ և ոչ ևս կոչեսցիս լրեալ և երկիրն քո ոչ ևս կոչեսցի աւերակ»: Այս սէր, այս

յոյս, այս հաւատ տառապեալ մարդու վշտակոծ ազգի փրկութեան ճանապարհն են. առանց այս առաքինութեանց վառեալ լապտերի ոչ բանտարկեալը բանտի դուռը կգտնի, ոչ լուղորդը՝ ծովի ափ, ոչ նաև՝ իւր նաւահանգիստ. առանց յուսոյ, սիրոյ, հաւատոյ շիք փրկութիւն թէ հոգոյ և թէ մարմնոյ:

Հայ եղբայրներ, մարդարէի առաջնորդող ձայնը մեզ է կանչում. մեր տառապանքի օրերում շմոռանանք սիրել մէկմէկու, սիրել հայրենի տաճար ու սրբութիւն, յուսալ որ սիրոյ մէջն է վառում Աստուծոյ արդարութիւնը, հաւատալ որ արդարադատ է Աստուած, նա պիտի վառէ իւր փրկութեան լապտերը մեզ՝ անձնիւր մարդու և ընդհանուրիս ցաւերից ազատելու համար:

Նա, որ ծովերի ալեկոծութիւնը երկնից քաղցր հայեացքով է դադարեցնում, որ տերեւաթափ ծառերն իւրաքանչիւր գարնան ծաղկով ու պտղով ճոխացնում, նա որ ամպերի ետեին պայծառ արե, երկնից մաքուր ցող է տալիս, նա, որ սև սիրտ կնոջ միսիթարութիւն է ներշնչում, վաստակեալի ծանրութիւնը թեթեացնում, աւերակներից փրկութեան ձայն յարուցանում, հին հին փառքերն հանդէս ըերում—նա շի մերժի և մեզ. այն Աստուածը

մեր Աստուածն է, եթէ սիրենք, եթէ հաւատանք, եթէ յուսանք:

Բայց այդ առաքինութեանց մէջ վարժուելու համար, եղբայրներ, հաւատով ազօթել պէտք է։ Ազօթենք անմահ խաչեցեալի կենարար պատարագի ս. սեղանի առաջ մարզարէի խօսքերով «Կեցն զիս Աստուած, զի հասին ջուրը յանձն իմ, ընկլայ ես ի խորս անդնդոց, ուր ոչ դոյ ինձ հանգիստ։ Աղքատ ու ցաւած իմ ես, փրկութիւն քո, Աստուած, ընկալցի զիս։ Աստուած փրկէ զՍիսվն և շինեսցին քաղաքք Հրէաստանի, շինեսցին, բնակեսցեն և ժառանգեսցեն ի նմա»։ (Սաղ. ԿԲ.):

---

## Զ.

«Զօրացարներ ծեռք լքեալք եւ ծունկը կթուցեալք, մխիթարեցարուք կարճամիտք սրտիւք, զօրացարներ մի երկնչիք։ Ահաւասիկ Աստուած մեր... ինքնին եկեսցէ եւ փրկեսցէ զմեզ»։

Ես. 1Ե—3.

Քնզ, կեանքի արհաւիրքներով ձաղկուած, չողմահալած ժողովուրդ, կեանքի ձմրան կա-

պանքներով շղթայակիր հեգ հայ, քեզ համար  
է հնչում այս խորհրդաւոր ժամին մարզաբէի  
յուսատու ձայնը «Զօրացարուք ձեռք լքեալք և  
ծունկը կլժուցեալք, միահիմարեցարուք, կարճա-  
միտք սրտիւք, զօրացարուք և մի երկնչիք. ահա-  
ւասիկ Աստուած մեր... ինքնին եկեսցէ և փրր-  
կեսցէ զմեզ»։ Ոյժ առէք լքեալ ձեռքեր, ծալ-  
ուած ծնկներ, միսիմարտեցէք սրտով կարճա-  
միտներ, զօրացէք և մի վախննաք, ահա մեր  
Աստուածը ինքն է գալիս փրկելու մեզ»։

Ո՞վ կըտայ ինձ այն գերազանց խմաստու-  
թիւնը, որ կարող լինէի հոգուս ամրազ կըտո-  
վով հանդէս դնել ձեր աշքի առաջ մարդացած  
Աստծու և Աստուածացած մարդու աշխարհ գա-  
լու հրաշալի գաղտնիքը. խրոխտ մարդու տկար  
միտքն այդ անըմբանելի գաղտնիքի առաջ նոյնն  
է, ինչ որ առկայծող ճրազը հոգմերի առաջ,  
ինչպէս բաց աշքը խաւարի գրկում։ Բայց մըտ-  
քից առաւել զօրեղ մի աշք կայ, որ արծուի  
թերվ ու սրատեսութեամբ սաւառնում իջնում է  
այսօր Բեթղեհեմի մթին այրը, ուր հրաշալիք-  
ների գրախտն է բացուած, մի աստղ, որ ցոլում  
իջնում է մանկան մսուրը, ժպտում է մաքուր  
հովիւներին, առաջնորդում խմաստուն մոգերին.  
այդ մաքուր զգացմունքն է, սիրտն է մարդու,  
հաւատի աշքն է, հաւատի բոցավառ աստղը։

Թող Եղոմայեցի բռնաւոր Հերովդէսը իւր  
յափշտակած պահի փառքով խրոխաայ, թող  
Բեթղեհէմի բարձունքում հազարաւոր լապտերի  
լուսով ցօղուած ապարանքի շուրջը գինուած  
պահապաններն իրենց տիրոջ գահը պահպանեն,  
թող նորա բիրտ ոյժի ստուերախիտ վայրերում  
վայրի քրքիջ անարգանք հեղեղեն դէպի անց ու  
դարձ անող անմեղ տառապեալները, թող վարձ-  
կան ու հաւատուրաց երգիչների երգն ու տա-  
ւիզը անարգ իշխանի անարգ փառքը հնչեցնեն  
Բեթղեհեմի հեռու շրջակայքում, թող Աննան ու  
Կայիափան յանուն բարեգործութեան որբ ու  
այրին կողոպտեն, թող ցամաքսիրտ ճարպիկ  
վաճառականը երկրապատթեան մոմ վառէ իւր  
ոսկու օնտուկների առաջ, թող անմեղութեամբ  
պարծեցող մեղսաթաւալ փարիսեցին քար բար-  
ձացնէ սխալական մեղաւոր, բայց ծնկաչոր  
կնոջ վերայ, թող մանուկներն արհամարհուին,  
հիւանդներն անդթութեան ձեռքերով մարդկա-  
յին բնակալայրերից դուրս ձգուին, հալածուին  
առաքեալը, կոտորուին մարզարէք,— հոդ չէ,  
մենք, հայ եղբայր, վառենք հաւատի լապտերը  
մեր սրտերում, մեր ետև թողնենք Բեթղեհեմի  
ամրոցն ու ցած իջնենք խոնարհինք հովտի  
մութ այրը, գնանք միանանք հովիւներին,  
իմաստուն, հարուստ մոզերին, որոնք եկել

ու ծունկ են իջել խորհրդաւոր մանկան առաջ:

Աղքատիկ ու համեստ քոյք իմ, խղճուկ հայ կին, գիտեմ շատ անգամ մեծամիտ պճնասէր կանաց քըզիջը ծաղրի ու արհամարհանքի տարափի է տեղացել քեզ վերայ, շատ անգամ շարախօսութեան, աններողամիտ բամբասանաց, զըրպարտութեան ծանր բեռներ են դրել վերադ. հոգիդ խոցուած է, մխիթարութեան է ծարաւ. նկ, մտիր Բեթղեհեմի այրը, նայիր իւր իսկ ձեռքերով Փրկչին խանձարուրով աստուածամօրը, որ քեզ նման արհամարհուած ու շարախօսուած էր, նայիր ու մխիթարուիր, սիրտ առ ու սովորիր հեղութեամբ արհամարհել մեծամտութեան ծաղրը քեզ վերայ:

Մանկունք, անմեղ պատանեկութիւն և դուք եկէք Բեթղեհեմի այրը. ձեր անմեղութիւնը մարմնացել է երկնաւոր մանկան մէջ. շուտով, շուտով կըմեծանայ նա, կապտակէ ձեղ արհամարհովներուն ու ձայն կըտայ. «Թոյլ տուք մանկուոյդ գալ առ իս, զի այդպիսեացդ է արքայութիւն երկնից»:

Եւ գուք գիտութեամբ ու աշխարհի իմաստութեամբ պարծեցող զլուխներ և ոսկեշար հարուստներ, խոնարհեցրէք ձեր խրոխտ պարանոցը, մտէք Բեթղեհեմի այրի նեղ շէմքը, տեսէք լժէ ինչպէս երկինքն ու երկիր քննող

իմաստուն մագերը, ոսկով ճոխացած այդ հարուստ թագաւորները ծունկ են իջել մսրի մէջ պառկած աղքատիկ մանկան առաջ. Նոցանից մէկը երիտասարդ է երկրորդը՝ այր մարդ, երրորդը՝ ծեր. Նոքա ընծայ են բերել Փրկչին ոսկի, կնդրուկ և զմուռս: Արդեօք հասկանում էք այս խորհրդաւոր ընծայաբերութիւնը. աշխոյժ երիտասարդութիւնը, խոհեմ այրութիւնը, իմաստուն ծերութիւնը ու խոհական հարուստ ընծայ են բերում ոսկի՝ անարատ կեանքի փայլան նշան, կնդրուկ՝ սուրբ սրտի երկրպագութեան նշան, զմուռս՝ վշտերին կարեկցող հոգու նշան: Անարատ փայլուն կեանք, սուրբ սրտով երկրպագութիւն, կարեկից հոգի, ձեղնից էլ առաւել մխիթարիչ բան կայ արդեօք. Բնչ են ոսկին, արծաթը մարդկային սահմանափակ իմաստութիւնը գոցա առաջ. ո՛չ, գոքաշ են բոցոտ սրտի վերայ տեղացող գովարար անձրե, գոցա մէջը չէ անդորրութիւնը հոգու:

Դուն էլ եկ, թագ ու պսակ ամուսինդ կորցրած սևաւոր այրի, վաղամեռ զաւակներիդ շիրիմները ողբացող սգաւոր մայր, եկ գուն էլ ծունկ իջիր աստուածային մանկան առաջ. շուտով, շուտով կըմիր կենայ ու կըքարողէ քեզ թէ կեանքը մահով շիմերջանում, շուտով փառաւոր յարութեամբ կըմխիթարէ քեզ և սիրե-

լիներիդ վերստին միանալու յոյս կըներչնչէ  
վհատած կրծքիդ տակ:

Ա՞հ, ի՞նչ էք կանգնել այրի գուան, մտքա-  
մոլոր ու դողդոցուն, վշտաւորներ, հալածուած,  
նախատուածներ. մի դողաք ներս մտէք և զուք  
Բեթղեհեմի այրը. այս դուռը մերժող մեծա-  
տան դուռ չէ, մի վախենաք, ներս մտէք և  
դուք, բացէք ձեր սիրտը մանկան առաջ. մի  
փոքր էլ համբերհցէք, շուտով Գողգոթայի սոտ-  
րոտէն մխիթարիչ ձայն պիտի լսէք «Եկայք առիս  
ամենայն վաստակեալք և բեռնաւորք և ես  
հանդոցից զձեղ»:

Եւ վերջապէս դուք, հովիւ, քահանայ եղ-  
բայրներ, բազ գիտէք թէ Տրաշափառ երկինքը  
մարրասիրտ հովիմների առջելք բացուեցաւ. նո-  
րա գառներ էին բերել մանկանը նուէք. ձեր  
հովուած, հասունացած բանաւոր հօտի մէջն էլ  
Փրկչին արժանի գառներ ունիք, գրկեցէք ու  
բերէք և զուք ծունկ իջէք արդար հովիների  
շարքում. ուխտեցէք, ով առաջնորդը ժողովրդի,  
թէ հաւատարիմ հետեւող կըլինիք այն մանկան,  
որ սխալական կնոջ, տառապեալներու, աղ-  
քատներու պաշտպան վահանն եղաւ. Բեթղե-  
հեմի խաւարը խաչի ստուիրն է, ընդունակ էք  
արդեօք հետեւել նորան մինչև Գողգոթայի բար-  
ձունքը. այստեղ՝ արիւնլուայ խաչի պատուան-

դանի տակն է դրուած ձեր փառաց պսակը. պսակ որի ծաղկունքը ամբոխի քաղած ու փընջած փուչն է:

Արդ, քրիստոնեայ հայ եղբայրներ, դիտեցէք մանուկ Փրկչի առաջ ծունկ իջած բազմութիւն. խեղճ կին ու սղաւոր այրի, հարուստ ու աղքատ, մանուկ ու երիտասարդ, թագաւոր ու հովիւ, իմաստուն ու քահանայ, տառապեալ ու հալածեալ, ամենքն իրրե հարազատներ հաւասար տեղ ունին չնաշխարհիկ մանկան առաջ։ Գոռող Բեթղեհեմը իջել հաւասարուել է այրին, մանուկ Յիսուսի առաջ մարդկային հպարտ լեռները դաշտ են դարձել, ձորերը լցուել և հաւասարուել։ Աստուծոյ արել ամենքի համար է փայլում, անձրել ամենքի վերայ ցողւում։ Եյս հրաշալի տեսարանի տռաջ հոգիս բարձրանում ու ձայնակցում է ձեր խնդպակցութեան, «Մեզ ու ձեզ մեծ աւետիք Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ...» Զօրացարուք ձեռք լքեալը և ծունկը կլծուցեալը, մխիթարեցարուք կարճամիտք սրբաժիք. զօրացարուք և մի երկնչիք. ահաւասիկ Աստուած մեր... ինքնին եկեսցէ և փրկեսցէ զմեղ»։

Ընդունիք և իմ մեղաւորիս երկրապատճիւնն ու սրտաղին աղօթքը մանկացեալ Աստուած. թոյլ տուր որ հոգուս անվերջ թախի-

ծովը ողողեմ սուրբ որորանդ, իմ Աստուած։  
Եթք ամենատես հայեացքովդ աշք ածես աշխարհ,  
ազգեր ու դարաւոր ժամանակներ, քաղցր ակ-  
նարկդ մի վայրկեան թող հանգչի և այս հէգ  
ժողովրդի վերայ։ Տես մեր տառապանքը, Տէր,  
քո մարմնաւոր հայրենակիցները միայն 40 տա-  
րի դեզերեցան Սինայի անապատներում, իսկ  
մենք դարերով։ Խարայէլի մնացորդը տեսաւ իւր  
յոյսերի պառւղը, իսկ մեր մնացորդի մի մա-  
սին անիրաւութեան սուրը կերաւ, միւսին՝ ան-  
դունդները բացուեցան ու կուլ տուին, ձմրան  
սպիտակ ձիւնը հայու արիւնով կարմիր ծաղ-  
կեցաւ. կենդանի մնացածներն էլ հերարձակ,  
կրծքաբաց ու բորիկ դռնէ դուռ կըշրջին անո-  
ղորմութեան ու շահասիրութեան երեսէն և բարկ  
հառաշանքով կաղաղակեն. «Լեռներ ընկէք մեզ  
վերայ, բլուրներ ծածկեցէք մեզ»։ Ա՛խ, Ցոր-  
դանանի անապատներն այնքան տւաղի հատիկ  
շունին, որչափ այս երկիր նահատակաց գե-  
րեզման ունի. Հրէաստանի աշնան ծառերն այն-  
քան դեղնած ու հողմավար տերե շունին, որ-  
չափ այս աղգ դալուկ դէմքեր ունի։

Ցօղէ, անհուն սիրոյ Աստուած, սէր ցօղէ  
քո առջև կեցած ժողովրդի վերայ որ վերակեն-  
դանանան մեր աւերակ սրտեր (ո՞հ, ատելու-  
թեան ու նախանձի արդիւնք) ու վերակեն-

դանանայքեղ երկրպագու խաչակիր ժողովուրդ։  
Ուղարկիր քո հրեշտակներին և Հայոց աշխար-  
հի բարձունքումն երգելու և աւետելու. «Փառք  
ի բարձունս Աստուծոյ և յերկիրն Հայոց խա-  
ղաղութիւն և ի հայ մարդն հաճութիւն»։

---

## Ե

### Ա. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՑԻՃԱՏԱԿԻՆ

Նահատակների տօն է այս, արինաներկ  
Նահատակների տխուր յիշատակ. կանզնած ենք  
մենք հայ ժողովրդի Նահատակուած մեծութեան  
առաջ. հայրենի յիշատակաց վերայ դաստիա-  
րակուող հայ մանկտին՝ դպրանոցիս դաստիա-  
րակ ուսանիկ Աւարայրի արենածիլ ծաղիկնե-  
րից քաղեցին ու նուէր բերին ձեղ, հանդիսա-  
կան եղբարք։ Այս, մի ասէք թէ 1500 տար-  
ուայ անցեալի դաշտերից քաղած ծաղիկը հոտ  
չունի. մօտեցէք հոտոտեցէք հին հին յիշատա-  
կաց ծաղկունք, որ անթառամ ու մշտաբոյր է  
սրտի ու խելքի մարդու համար։

Ինչպէս յաղթական դրօշակը պատերազ-  
մող զինուորի ձեռքում, ինչպէս թագ ու գայի-

սօնը՝ այժի հզօր բարձունքում, այնպէս ոգես-  
րիչ, այնպէս հոգեպարար են հայրենի յիշատա-  
կաց դիտութիւնն, անցեալի դեռ թարմ հողե-  
րում պառկած նահատակների նշխարք՝ փառա-  
դուրի ժողովրդի համար։ Բաղդի անհաւասար  
ձեռքը հաւասար բաժիններ չէ տուած ազգի-  
րին. նորա մի շարժումով ազգերից ոմանք կանգ-  
նած են ուկեղէն խարիսխների վերայ, ոմանք  
յենուած են իշխանական գաւազանին, ոմանք  
զիտութեան անշարժ վիմի վերայ. իսկ մենք  
կանգնած ենք նահատակաց հողերի վերայ, հին  
հին յիշատակաց դամբարանների բով. այդ շի-  
րիմներից ոգեսրիչ ձայներ կուգան. մօտեցէք  
ձեր հայրենինաց ամեն մի քարին, որի տակ մի  
մի նահատակ է հանգչում, կարողացէք հասկա-  
նալ այդ քարերի լեզուն, ու այն ժամանակ  
դուք կիմանաք թէ շենք մենք դժբաղդ ազգերի  
շարքում, վասն զի հայրենինաց յիշատակներն էլ  
ոգեսրիչ ու փրկարար են։ Մտքի բարձունքնե-  
րում սաւառնող մի փիլիսոփայ բանաստեղծ  
հարցնում է իւր հայրենակիցներին. «Անդիխացիք,  
եթէ մեր ազգային երկու պարծանքներից մէկը  
պահանջէին կամ հայրենինաց թագ կամ Շէքսպիր.  
որը կյօժարէիք տալ. ևս աւելի շատ առաջինը  
կըտայի, որովհետեւ կանցնին զուցէ 10,000  
տարի երբ Անգլիոյ անունն էլ շիլինի աշխար-

հիս վերայ, բայց ընտիր նախնեաց՝ Շէքսպիրի հանճար, ոգին, յիշատակը կարող է նոր Անգլիա ստեղծելու։ Ահա թէ որբան հզօր է հայրենի հանճարը, յիշատակը բարոյական վերածնութեան գործում, որբան սուրբ նահատակութիւն, որբան երջանիկ այն երկիր, որ նահատակաց արիւնով է ցողուել։ Այս մտքով ևս չեմ կարող շբացականչել՝ օրհնեալ վիշտ, օրհնեալ հալածանք, օրհնեալ և դարձեալ օրհնեալ նահատակութիւն, քաղցր է քո պտուղն իմ քիմքում. դու իմ պաղ կուրծքս ջերմացնող հուրն ես, խաւարի զրկում իմ առջև յոյսերի լապտեր վառողը։

Բայց ի՞նչ է նահատակութիւն. նահատակութիւնը ինքը պտուղ է, հասունացած կարմիր պտուղ, որ հաւատի, բարոյականութեան ու գիտակցութեան ծառի վերայ է բումնում. հաւատ առ Աստուած, թէ կայ մի յաւիտենական հզօր աջ, որի մէջն է անհատի և ազգերի կեանքն ու մահը. բարոյականութիւն՝ թէ պէտք է ապրել ու գործել մերձաւորի բարեաց համար, գիտակցութիւն՝ թէ պէտք է դուրս գալ տգիտութեան խաւարից ու մտքի պարզ աշքով տեսնել բնութեան ու մարդկանց փոխադարձ յարաբերութիւնը, տիրող ներդաշնակութիւնը — ահա այս երրորդութիւնը դաշնակցել, միա-

ցել է ու ասել «Եկայք արասցուք զսուրբ նահատակութիւնն լստ պատկերի մերում»: Նահատակութիւնն այս երեքի ծնունդ է, անհաւատութեան, անբարի եսականութեան, կոյք անգիտակցութեան անհաշտ թշնամին. հենց այս վերջիններիցն էլ նա ընկնում է իրքի յաղթական զինուոր, բայց չի մեռնում. ընդհակառակն առաւել արդիւնաշատ է լինում, երբ ինքն ի հող և յիշատակն յստնորդների սրտումն է մնում: Այս իմաստով է, որ նահատակութիւնը վերջ չունի ու պիտի մնայ քանի որ մարդկային ձայնը չի լրել բաց երկնքի տակ:

Երբ նահատակ անունն եմ տալիս, երեխ ձեր աշքը դառնում է միայն դէպի անցեալը. գուք գուցէ կարծում էք, որ միայն արիւնոտ նահատակութիւն կայ. իսկ ես յիշողութեամբ շրջում եմ Վարդանանց անկման տեղերը, բայց աշքով տեսնում եմ իմ առջև նոր նահատակութիւն: Լերան լանջից անուշ խոխոջով դէպի վայր թաւալուող աղբիւրի ընթացքը փոխել կարող ենք, բայց աղբիւրի ակն ու ջուրը նոյնը կըմնան: Այսպէս է և ամեն սուրբ ու վսեմ գաղափար. նա միշտ միևնոյնն է ու յաւիտենական, բայց նորա արտայայտութիւնները մտքի գարգացման հետ մէկտեղ փոխում են: Նահատակութեան գաղափարն էլ անփոփոխ է,

Նորա արտայայտութիւնն է փոփոխական։ Մեր օրհնեալ պետութեանս, Թուսիոյ մեծագոր կայսեր բարձր հովանաւորութեամբ չկան կամ քիչ են այսօր արիւնոտ նահատակութիւններ, բայց բիւրաւոր են անարիւն նահատակները։

Նահատակ է անտուն անտէր թափառական մշակը, որի քաղցր ակնկալութիւնը մահն է։ Նահատակ է սգաւոր այրին, որի հանգիստը արցունքն է։ Նահատակ է իւր ամուսնու ձեռքում այն հայ կինը, որի աշբը միշտ թաց, իսկ սիրտը միշտ սառոյց է։ Նահատակ է իւր կնոջ անյագուրդ պճնասիրութեան համար վաստակաբեկ այրը, նահատակ է իւր անմիտ ծնողաց քմահաճոյքով ու իւր խղճի ձայնը կրծքում խեղդող և ատած մարդուն հարճ գնացող խեղճ հայ օրիորդը. այս նահատակները տգիտութեան կամ թերագիտութեան առատ հունձն են։

Նահատակ ես և դու, իմ հայրենի սրբազն տաճար, Հայոց ս. եկեղեցի, զի քեզմով չնշած օր ու արև տեսած դաւակներդ այսօր պաղ են դէսլի քեզ, ու քո սրբազն կամարների տակ չեն մրմնջում նախնեաց ազօթք։

Դուն էլ նահատակ ես, ս. տաճարի նախագաւիթ, նուիրական յարկ դպրանոցի. քո մարմինդ հարիւրաւոր սպի ունի իւր վերայ, հարազատների ձեռքով թողած. ամենքն հարը-

տացան, ոսկով ու արծաթով շլացան, իսկ դու  
զառամեալ մօր հասակ ունիս ու դեռ աղքատի  
տոպրակով կըշրջիս այս ճոխ քաղաքում և օրա-  
կան հացով կապրիս երկու վաստակաւորներիդ  
շնորհիւ ու կպատսպարես քո նահատակ աղքա-  
տիկ գաւակներիդ. Ենչ կըլինի քո վիճակը, երբ  
հիւանդանաս, ուր է քո դրամագլուխը, որով  
քո ցաւերդ գարմանէինք ցաւոց օրերում:

Նահատակ ես դու, հայր հօգիոր, հայ կար-  
դաւոր, երբ հօտդ գլուխ դարձրած դէպի օտար  
ձայնն է գնում և քո անարձագանք ձայնդ կըրծ-  
քիդ մէջն է խեղդում: Աշխ, քաղցր էր քեզ ս.  
Դեռնդեանց հետ նահատակուիլ Պարսից թրերով,  
քան ուրացուած լինել քո հարազատ հօտից:

Դու էլ նահատակ ես, չայոց անուշիկ լե-  
զու, շատ ընտանիքներից հալածուած մայրենի  
բարբառ... վերջապէս ո՞րը թուեմ, նահատակնե-  
րի աշխարհ է այս աշխարհ. «Թող աղբէր, թող  
որ իմ սիրտ կրակ ու բոց վառուած էլնի: Թող  
իմ աշք կլկլացող՝ պղտոր պղտոր աղբիւր էլնի...»

Բայց այս նահատակութիւնք փրկարար կը  
լինին, եթէ գիտենանք նոցա առաջը խոնար-  
հել, եթէ բագուկներս դէպի երկինք ու նահա-  
տակներ տարածենք. եթէ զգուշանանք տպէտ  
հայեացքներից. ո՞հ, սոսկալի է տպիտութիւն,  
նորա աշքերը մանր յանցանքներ շուտ են տես-

Նում, իսկ խոշոր անբարոյ գործեր՝ երբէք չեն  
տեսնում:

Հայ կին, հայ մարդ, կամաւոր այրիու-  
թեան սև քօղն առած մեր յուսալից աշքերը  
զէպի ձեզ է դարձած. ձեռքներիս ընտիր նախ-  
նեաց վառած ճրագ, նահատակների շիրիմներ  
ու նշխարք ենք հանդէս բերում մութ խորշե-  
րից. թափեցէք ձեր սէրն այդ նշխարների վերայ,  
ծունկ իջէք նոցա առաջ, կապեցէք ու կապուե-  
ցէք իրար հետ, վանեցէք նեղ ոգին ու ատե-  
գութիւն և նահատակութեան անուշիկ զեփիւն  
պիտի շոյէ և ձեր տենդոտ ու դալուկ ճակատ  
յուսարեկութեան և օտարասիրութեան ամպերն  
մէկդի քշելով ձեր դէմքից:

Իսկ դուք, դպրանոցիս սիրական սաներ,  
գօտևորուեցէք, եկէք իմ ետևից, ես ձեզ կա-  
ռաջնորդեմ հայրենի յիշատակաց գերեզմանա-  
տուն. խառնեցէք այնտեղ հին ու նոր նահա-  
տակների մոխիրներ, նոցա տակ թաղուած,  
«հին հին կրակներ կան»:

Է

«Դիր Տէր սպանապան թերանոյ  
իմոյ եւ դուռն ամուր շրթանց-  
իմոց զի մի երբէք խոտորեսցի  
սիրտ իմ բանիւ չարութեան»:

Սաշ.

Ամեն ոք կեանքն հասկանալու համար մի  
ճանապարհ ունի. մէկի ուղին լուսաւորող լապ-  
տերը զիտութիւնն է, միւսինը՝ հաւատը, եր-  
րորդինը՝ լեզուն, չորրորդին՝ նիւթական բա-  
րելաւութիւն և այլն. ես էլ մի ճանապարհ ու-  
նիմ, որով յառաջ եմ գնում և ոչ անյօյս թէ  
կեանքի վերայից մթութեան քօղը հետզհետէ  
կըվերանայ և ինձ համար. ես էլ կեանքի էու-  
թիւնը, գաղտնիքը փոքր ինչ կըհասկանամ, ոք  
չափով իմ մարդկային տկար միտքս ընդունակ  
է ըմբռնելու. իմ ճանապարհս խօրհրդածու-  
թիւնն է, իսկ խօրհրդածութեանս նիւթը՝ ընու-  
թիւնն ու մարդը: Երբ ես ներդաշնակութիւն  
եմ տեսնում, համաձայնութիւն նկատում բնու-  
թեան և մարդու մէջ, երբ ընութեան առար-  
կաների տէրը, մարդու կոչումն ես ըմբռնում  
եմ. իմ առջևս բացւում է ս. Աւետարանը, լու-  
սարանւում նորա աննման էջերը և ես նորա

մէջ իրրի ամենապայծառ հայելու մէջ իսկական կեանքի պատկերն եմ աեսնում։ Ես տեսնում եմ կեանքն Աւետարանի մէջ, բայց ոչ տգէտ շրթունքներով աղաւաղուած Աւետարանի, այլ Փրկչի Աւետարանի մէջ։ Ես տեսնում եմ Աւետարանն ու կրօնը կեանքի մէջ, բայց ոչ աղաւաղուած ու նախապաշարմունքներով լեցուն կեանքի, այլ Փրկչի կեանքի մէջ։ Ես տեսնում եմ Աւետարանում բնութեան ու մարդու ներդաշնակութիւն։ Ես այդ ներդաշնակութեան մէջ Աւետարանն եմ տեսնում։ և ինչ որ այդ ներդաշնակութեանը համաձայն է իմ հոգիս լեցնում է հրճուանքով, ինչ որ աններդաշնակ մահու ցանկութեամբ, կառն վշտերով։

Ահա ձեզ մի համեմատութիւն բնութեան ու կեանքի։ Երբ ես կանգնած եմ մի կանաչազարդ բարձրաւանդակի լանջին, իմ աշքերս խայտալով շրջում են մի հրաշալի տեսարանի վերայ. վերը կապուտակ, զինջ եթերք, որի միջով լուսաշաղ վարսերով արեն է լողում ու ծիծաղում իմ շուրջու տարածուած հազարերանգ ծաղկավառ դաշտ ու հովիտների հետ, շաղ ու ցողով պսակուած դալարու երեսին, մի անսահման բերկրութիւն լցնում է իմ հոգիս, ես ալրել եմ ուղում, ես ատում եմ մահը։ Այդ հրաշալի տեսարանը արեի, կապուտակ եթերքի,

շաղ ու ցողի, հողի ներդաշնակութեան, սիրոյ արդինքն են: Բայց ահա տեսարանը փոխւռմէ, ես նոյն տեղն եմ. հեռու հորիզոնում մի կտոր սև ամառ երևաց, հետզհետէ մեծացաւ, անժամանց քօղով ծածկեց երկնից կապուտակը, պատուարկեցաւ արեի լոյսի առաջ ու մի մթութիւն փակեց երկիր. որոտում, գզորդ աշխարհ բռնեց, հրեղէն օձապտոյտ զետեր բացուեցան երկնքի մէկ ծայրից միւսը, թափուեցաւ կարկուտ և իմ շուրջս տարածուած ծաղկավառ պսակը բնութեան փետտուեցաւ, թափուեցաւ ու լերկ դարձաւ ինչպէս փետրած սիրամարդը: Այս տեսարանը սոսկումով լցրեց իմ հոգիս, ես միայն զգացի ինձ՝ ինչպէս անպատում, դառնացաւ սիրտս, կեանքի ոէրը խոյս տուաւ ինձնից, ես հաշտ աշքով մահու հրեշտակին եմ սպասում:

Նոյն պատկերը և մարդու հոգեկան աշխարհումն է բացւռմ, երբ ես տեսնում եմ սիրոյ համերաշխութեան ծաղիկը զարդարել է մարդկանց կուրծքը, երբ տեսնում եմ մարդկանց համախմբուած վսեմ գաղափարների շուրջը երկրպագութիւն տալիս, երբ տեսնում եմ սիրոյ արձանը բարձր ի գլուխ կանգնած մեր հոգու աշխարհում, որի առաջ երկրպագութեան խունկ ենք ծխում, ես ապրել եմ կամենում,

ես ատում եմ մահը, ես ուզում եմ անմահ լինել:

Բայց... բայց երբ ատելութեան մթին ամպը մարդկանց սրտի պղտոր ծովից ենելով փակում է մարդու դէմքը, եռում, որոտում, ատելութեան, բամբասանքի, շարախնդութեան կարկուտ թափում ու թօշնում համերաշխութեան վարդն 'ի թփին, խորտակում սիրոյ երկրպագելի արձան, լռում նորա պաշտամունք, աւերակ դառնում առաքինութեան աշխարհն, որ մարդու սրտումն է... ահ, այն վայրկենին կեանքն ինձ համար դառնում է մի դաշտ փուշ. մի զետ անէծք, մի աշխարհ նզովք. ես ուզում եմ մեռնել, ես կարօտով հարցնում եմ «ուր ես ով մահ. շուտ եկ անցուր իմ կեանք»: Այս խոհերն յատուկ են և ատեն խորհող մարդուն: Սիրոյ հակադիր ատելութիւնն է այս և ահա թէ ինչ է նորա արդիւնքը:

Ատելութեան զզացմունքը զուտ եսական զզացմունք է, որ առաւել յատուկ ու վայելուշ է զազաններին քան մարդուն, որ Աստուծոյ պատկերն ունի. ես չեմ խօսի այսօր ատելութեան վերայ, այլ կշատանամ նորա մի ճիւվով, մի արտայայտութեամբ: Ատելութիւնը մի բաղմալեզու, բազմագլուխ հրէշ է, որոնցից մէկը ըամբասանքն է:

Բամբասանք խօսքը նոյնն է ինչ որ դըր-

պարտանք, չարախօսութիւն, անուանարկութիւն, բամբասել նշանակում է վատաքանել մէկին յանիրաւի, ուրանալ արժանիքը և ետեից միայն վատ համբաւ տարածել, առանց լաւը տեսնելու, առանց վատն երեսին ասելու համարձակութեան:

Տեսել էք դուք ճոխ անտառ հսկայական ծառերով, ծաղկաւէտ՝ ինչպէս աստղագարդ երկինք, գունաւոր ինչպէս առաւօտեան արշալոյսին ծաղկած ծով և տեսել էք թէ ինչպէս մի ծածուկ ձեռք կայծ է թողել այնտեղ հրոյ ճարակ դարձրել, զարդ ու շուք, ծաղիկ ու պտուղ, մոխրակոյտի փոխուել հսկայական պսակը բնութեան: Ճիշտ այդպէս էլ բամբասանքի հուրը լափում, լիզում, մոխիր է զարձնում գեղեցիկ անուն, ընտանեկան պատիւ, համեստութեան ոգին, անկեզծութեան հաւաստիքը, բարի վարկ ևայլն ևայլն:

Բամբասողի լեզուն սանձ չունի, նա անսանձ կերպով մերթ անդունդներն է իջնում, մերթ բարձրանում ու տարածւում այստեղից մինչև ճշմարտութեան արեն ու խաւարով ծածկում նորա երեսը: Բամբասողի լեզուն օձ է, որ առաքինութեան ամենալնտիր ծաղիկներից միայն թոյն է պատրաստում:

«Բամբասանքի հարուածը մի պարսպար

է, որ հեռուից է խփում, մի սուր, որ մօտիկից է հարուածում. այդ հարուածը չէ կտրին պատերազմողի հարուած, այլ թիկունքից ծածուկ եկած անարգ մատնիշի հարուած»։ Բամբասողի աղօթքը, սրտագին մրմունջը Աստուծոյ տաճարում բամբասանք է։

Բնութեան ամեն երեսյթ իւր բացատրութիւնն ունի. հոգեկան աշխարհի երեսյթներն էլ իրենց բացատրութիւնն ունին և որովհետև բամբասանքի գարշահոտ ծառը միայն մարդու սրտումն է աճում և լեզուով պտղաբերում, քըննենք այդ երեսյթը։

Բամբասանքը ինքը հիմնական ախտ չէ, այլ հետևանք ատելութեան և երեք գլխաւոր աղբիւր ունի. տգիտութիւն, անշնորհութիւն (նախանձ և շարախնդացութիւն) և սովորութիւն կամ բարք։

Տգիտութիւնը կշռագատելու ուղիղ չափ, շարն ու բարին որոշելու աշք չունի. թող մի շարամիտ լեզու մի սուտ ձգէ ամբոխի ծովի մէջ և այդ սուտը բամբասանքի ալիքներով օղակ օղակ կերթայ մինչև ափը, մինչև ճշմարտութեան ժայռերին խփուելով փշրուի։

Այլ կերպ է անշնորհութիւնից առաջացած բամբասանքը, այն մարդը, որ գիտակցում, զգում է, որ ինքը բնական չնորհալիութիւնից

զուրկ է և ուրեմն մարդկանց սրտերում տեղ չունի, սրտի նեղութիւնից, նախանձից սկսում է բամբասել, վատաքանել չնորհալի մարդուն, աշքից քցել չնորքը, որպէս զի իւր անշնորքութիւնը խիստ աշքի շընկնի։ Ենչնորք նախանձից յառաջացած բամբասանքը դեռ մի փոքր մարդկային է, բայց չարախնդութիւնից ծագած բամբասանքը զուտ զիւական է, զուտ սատանայական ցանկութիւն։ Չարախնդաց մարդը խնդում ուրախանում է այլոց հասած չարկի, տանջանքի վերայ և իւր թունաւոր լեզուով աշխատում է սոսկալի տանջանք պատճառել մերձաւորին, որպէս զի այդ տանջանքովը զուարձանայ։

Բամբասանքի այս երկու տեսակը երբ չուտ շուտ են կրկնում, դառնում են բամբասողի համար բարք, սովորութիւն, որից բաժանուելով այլու անհնարին է դառնում։

Բաւ է այսքանը. այժմ բամբասանքի արդիւնքը, պտուղը տեսէք։ Խսրայէլի քահանայապետները, որ հրապարակում կնոջ երես չտեսնելու համար համեստութեան քօղ էին ձգում երեսներին, մինչդեռ իրենց տներում զավտնի կանանցներ էին պահում, տեսնում էին Փրկիչ Յիսուսին բաց ճակատով խօսելիս կանանց հետ. նորա այս անօրինակ անկեղծութիւնը և իրենց

հոգուն միանգամայն անհասկանալի մաքրութիւնը բամբասում են ասելով. «Ահա մեղաւորների բարեկամը, կերող, խմողների և մեղաւորների բարեկամ Յիսուսը»:

Քահանայապետները մաքրութիւնը կրօնը կեղծիք են դարձուցել, սրտի կրօնը միայն տաճարի դրսի կրօն շինել. Փրկիչը կեղծ բարեպաշտութիւնը մտրակում է համարձակ կերպով, իսկ բամբասողներն ասում են «Մենք լսեցինք որ նա Աստուծուն հայնոյում էր». և այս ու սոցանման բամբասանքները Փրկչին մինչև Գողգոթայի բարձունքը հասուցին:

Դէպի կեանքը դառնանք. ահա ձեզ մի բամբասուած խեղճ առաքինի օրիորդ, որ լացող ուռենու ճիւղերի նման դէպի հողն է խոնարհել. նա մտքամոլոր որոնում է իւր բազին ու անարատ անուն, որ բամբասանքի աղտոտ հեղեղը գլորեց ու անհետ տարաւ. Ահա ձեզ մի առաքինի տիկին, որ կանգնած է խաղաղ հոգւով հրապարակի վերայ, շուրջը մի շարք բամբասող լեզուներ, իրենց խայթոցը դէպի նա են ուղղել շար նախանձից:

Ահա ձեզ մի հովիւ, որ ծաղկաւէտ զետերի ափին ամբոխի զառներն է արածեցնում. սարից գայլ իջաւ, քաջ հովիւը իւր զառները պաշտպանելու համար կոխւ մտաւ, բոլորն ազա-

տեց առանց մէկի ու վիրաւորուած արխմէնոս  
ճակատով յետ դարձաւ. ամբոխը շհաւատաց  
նրա անձնուիրութեան ու այսպէս բամբասեց  
թէ «Գառն ինքը հովիւն է կերել ու իւր ճա-  
կատը դիտմամբ արխմէնոտել»:

Ահա ձեզ մի քահանայ որ իւր ամբողջ հո-  
գին է գրել իւր ժողովրդի վերայ. նորա հոգին  
է խօսում ձայնի մէջ, բայց ամբոխը կեղծիքի  
մէջ է բամբասում նորան:

Ես մը լուեմ բամբասանքի զոհերից.  
մտէք նահատակների, մեծ մարդկանց հանճար-  
ների, հայրենասէրների, հերոսների գերեզմա-  
նատուն, նոցա բոլորի տապանաքարերի վերայ  
այս արձանագիրը կը կարդաք «Կոռւեց հերոսի  
պէս ու ընկաւ իւր հարազատների բամբասող  
լեզուից»:

Ճատ են այդ նահատակները, որովհետեւ  
անշափ են բամբասանքի դինուորները. ես տե-  
սայ պատանիներ, որոնց մատադ շրթունքի վե-  
րայ, ծնողները բամբասանքի գարշելի սերմն էին  
ցանել: Ես տեսայ ալեզարդ գլուխներ, որոց  
ճակատի կնճիռների մէջ «մեծ բամբասող»  
անունն էր գրոշմուած: Ես տեսայ կանայք,  
որոնց կրծքի գարդը բամբասանքն էր: Ես տե-  
սայ քահանայք, որոնք սուրբ օծումն ընդու-  
նելիս ուխտած են բամբասանքով մնուցանել

իրենց հօտը. օհ, ինչ զգուելի բան է բամբասանքը քահանայական շրջունքներում։ Ես երէկ մի վաղամեռ տիկնոջ լայն բացուած գերեզմանի քովը կեցած էի, երբ նորա դադաղը հողն իջեցրին. ես մտածում էի ահա մի վայր, գերեզման, ուր մարդկային ատելութիւնը գէթ մի քանի վայրկեան դադարում է, ուր կեանքի ունայնութիւնն է արձանանում. բայց հէնց այդ վայրկեանին իմ ականջիս բամբասանքի ձայներ հասան ու իմ միտքս եկաւ իմաստունի խօսքը թէ «Երանի մեռելոց, որք ի տէր ննջեցին». և յիրաւի հազար երանի մեռելներին, որ բամբասանքից ազատուեցան, որոց ականջը յաւիտեանս գոց է բամբասանքի առաջ։ Ա՛խ բամբասող մարդ, երանի թէ անլեզու ծնած լինէիր, այն ժամանակ ես կհաւատայի թէ անէծք չէր ընկնի մարդկութեան գլխին։

Սողա, ով բամբասանքի օձ, սողա թաւուտների միջով, խայթէ միամիտ անցորդին. բայց կըդայ օր երբ ճշմարտութեան հարուածը գլուխդ կըջախջախէ, ճշմարտութեան՝ որ արծուի հայեացքով բարձունքներումն է սաւառնում։ Կոծիր, բամբասանքի որդ, կոծիր բամբասողի սիրտ, մինչև որ նա էլ կըմաշուի ու կ'ոչընչանայ ինչպէս ոչնչացաւ բարի անունը բոլերանում։

իմ ունինդիր եղբայրներ, բամբասանքի  
անապատներում թափառում էին խրայէլացիք.  
այդ անապատներից օձեր ելան ու սկսեցին  
թունաւորել մարդկանց. Մովսէս մարգարէն մի  
պղնձեայ օձ շինեց, ձողի վերայ տնկեց և պատ-  
ուիրեց ժողովրդին հաւատով այդ օձին նայել.  
նայողներն ազատ էին մնում սողուն օձերի  
թոյնից. Արդ, սիրելիք, բամբասանքի թոյնով  
վարակուածներ, ձեր առջելը կանգնած է ոչ  
պղնձեայ օձ, այլ արիւնով ցօղուած սիրոյ Խաչն  
Յիսուսի. հաւատով նայեցէք այդ խաչին. թա-  
փեցէք բամբասանքի թոյնը ձեր սրտից նորա  
առաջ ու սէր առէք, միշտ լաւը խօսելու սէր,  
միշտ վատը բաց ճակատով մերժելու սէր. և  
ձեր աղօթքն այդ խաչի առաջ թող բամբասան-  
քի թշնամի մարդարէի այս հրաշալի սաղմոսը  
լինի. «Դիր Տէք պահապան բերանոյ իմոյ և  
դուռն ամուր շրթանց խմոց, զի մի խոտորես-  
ցի սիրտ իմ բանիւ շարութեան»:

Թ

«Ձայն հառաջանաց, սրտի հեծութեան, ողբոց աղաղակի քեզ վերընծայեմ տեսողդ գաղտնեաց»:

(Ս. Գրէժոր Նորէ՛զէ)

Քրիստոնեայ հայ եղբայրներ.

Տխուր է վիճակը գիշերագնաց ուղևորի, երբ նորա ճանապարհն ընկած է բարձրակատար լեռներու լանջով, անզնդախոր կածաններով, գաղանաշատ անտառներով. նա շուրջն է նայում. ամեն ժառի տակից, ամեն թփի ետևից վտանգի կատաղած բերանն է տեսնում: Սակայն յուսաբեկութեան թմրութիւնը շիթափում նորա հովու վերայ. նորան առաջնորդ են իւր գլխի վերայ պլազացող աստղերը, նոցա լուսով երկում է ճանապարհ, երեան գալիս ծածկուած վտանգ, որից խուսափում է անօգնական ուղևորը: Բայց յանկարծ ծնւռում են ամպեր, լողում կապուտակ եթերքի երեսով ծածկում դէմքը շատ աստղերի. կտոր կտոր թխպերի միջից, տեղ տեղ դեռ երեսում բոցավառ կայծեր. նորա էլ հետզհետէ ծածկում են, հետզհետէ թանձրանում խաւար. հետզհետէ սա-

ւառնելով մօտենում թեատրած յուսահատութիւնը խեղճ ուղեորի շփոթուած գլխին. ահ, անտանելի է այդ վիճակ:

Հայ գիտակցով մարդ, կեանքի անհարթողիով է ընկած քո ճանապարհը, գիշերագնաց ևս դարձել. երկինքդ կտոր կտոր սպառնալից ամպերով է ծածկւում. նոցա միջից հատ հատ վառ աստղերը որ քո ուղիդ էին լուսաւորում, հետզհետէ մահու ամպերի ետևն են անցնում ու մթնում է ճանապարհդ: Ճանապարհիդ վերայ ճշմարիտ մարդասիրութեան և ժողովասիրութեան շող սփռող մի աստղ ևս Գրիգոր Զանշեան մահու սև ամպի ծոցն ամփոփուեցաւ, միայն յիշատակը թողնելով բանիբուն մարդկանց սրտում, օրհնութեան և պսակի արժանի յիշատակ:

Զարմանալի և միանգամայն հրաշալի է մարդու սիրտը. դա մի բուրաստան է, ուր հազարերանկ ծաղիկ է բուսնում. կան յիշատակներ, անուններ, գերեզմաններ, որոց վերայ մի հատիկ ծաղիկ անգամ չեն ձգում սրտիդ ծաղիկներից. այդ ժամանակ դու նման ես ժլատ մարդու, ժլատ ու շար պարտիզանի: Բայց և կան յիշատակներ, թարմ հողարլուրներ, որոց վերայ անխնայ սփռում ես նոցա և առաւօտեան շողի փոխարէն մարտուր արտասուքովդ ես ցողում: Ի՞նչ է այս խարութեան պատճառը.

միթէ ամեներեան հաւասարապէս չեն ծնւռում։ Այո՛, ամեներեան հաւասար են ծնւռում. քայց անհաւասար մեռնում. այստեղէ որոնելու գաղտնիքը։ Մի օրինակ այդ անհաւասար կեանքի, անհաւասար մահուան պատկերը թող լինի։ Գարնան յորդ անձրևներով հեղեղուած, լայնացած և կաշկանդող ափերիցը կատաղի մոնչիւնով դուրս եկած գետում դետատար են լինում մի քանի թշուառներ. ալիքը զլորում է նոցա, մահն ու կեանքի յոյսը կռւռում են իրար դէմ։ Գետի ափին հազարաւոր ամբոխ կանգնած նայում է, իւրաքանչիւրը միայն իւր զաւակին կամ հարազատին է զրկած։ Այդ տեղ կան մարդասիրութիւն հոչակող հրապարակախօսներ, մի քանի արծաթով «բարեգործ» անուն գնած հարուստներ, այդ տեղ կան կեանքի դէմ քարոզող և մահը ջատագովող իմաստաէրներ, բարեպաշտի հոչակ ունեցող աղօթովներ, բաց երկնքի տակ հայրենասիրական ճառեր կարդացող անձնուրաց անձնասէր հումանիստներ եայլն։ Բայց այս ամենը ցաւռում են միայն. ոչ ոքի մտքով չէ անցնում իւր անձը վտանգի ենթարկել թշուառներին օգնելու համար։ Յանկարծ հազարաւորներից մէկը մոռանում է ինքն զինք, յիշում ջրատար եղբարդ, յիշում իր պարտք, թռչում ալիքների մէջ։ Ճշմարիտ մարդասիրութեան

Հզօր ձայնը խեղդում է ալիքների մոռնչը նորա կրծքում. նա հաւատով է շարժում իւր բազուկները. նա այլևս չի երկում. «Ըփառ»։ լրում է ափից. «անմիտ»։ շշնջում են ոմանք, «փառասէր» ձայն են տալիս այլք։ Անցնում են րոպէներ, հաւատը դէպի բարութիւն յաղթանակ է տանում. հերոսը հանում է երկու ջրատար, մէկը կենդանի իրքե վկայ կատարեալ բարութեան, միւսը դիակ՝ քրիստոնէական կարգով հողին յանձնելու։ Յոզնած է հերոսը, բայց հոգին անխռով. նա իւր իդէալի մէջ մխիթարութիւն է գտնում, անկողին ընկնում ու խաղաղ մեռնում։ Ահա այսպիսի կեանքն ու մահուան։ Ահա թէ ինչպիսի յիշատակների առաջ ենք թափում մեր սրտի լաւագոյն ծաղիկները։ Ես մտադիր չեմ վաղամեռ մարդասիրի կենսագրութիւնը կարդալու, այլ միայն շեշտելու այն վսեմագոյն գաղափարները, որոնք ֆանչեանի կեանքի ուղին լուսաւորող, քաջալերող հրեշտակներն են եղել դէպի կատարելութիւն, դէպի Փրկիչ Յիսուսի սիրած ու քարոզած կատարելութիւնը։ Իւր կենաց ու գործոց մատեանում կարդում ու տեսնում եմ, թէ հանգուցեալը բարձրագոյն երջանկութեան համար է ապրել։ Բարձրագոյն երջանկութիւն կամ

իդէալ, բարձրագոյն կատարելութիւն, որ Աստուծուն է մօտեցնում մարդուն նորանումն է, որ կատարելութեան ճանապարհի վերայ դրած անհատ ջանայ իւր շրջապատի խաւարը փարատել, մարդկային թշուառութեան դէմ մաքառել, կեանքի ցաւը թեթեացնել և հանուրի բարեկեցիկ վիճակի մէջ ինքն էլ իրը մասն իւր երջանկութիւնը զտնել։ Այս բարձրագոյն բարիքին հասնելու ճանապարհը սրտի բարութիւնն է, զէնքը՝ անդուլ աշխատանք։ Իսկ թէ ամփոփելու լինինք բարձրագոյն երջանկութիւն, կատարեալ բարութիւն, աշխատանք, կստանանք այն սէրը, որ Փրկիչ Յիսուսն է քարոզել։ Այս սիրով է ոգեորուել հանգուցեալ Գրիգորը, երբ իւր կեանքի կոչումն է ընտրել միլիոնաւոր ժողովրդի արդարագատութեան զործին նուիրելիս։ Նա հաւատացել է թէ իւր վաստակը չի կորչի ու չի կորել։ Ռուսիոյ լայնածաւալ երկրի մեծամեծները, մտքի, արդարասիրութեան և սիրոյ բարեկամները լաւագոյն զգացումների պսակ բոլորեցին տաղանդաւոր մարդու վաստակաւոր ճակատին։ Նորա անձնաւորութեան մէջ մարդ տեսան։

Բայց քաղցր է ինձ կմնգ առնել մի փոքր ֆանչեանի յիշատակի առաջ, իրեւ հայ մարդու լաւագոյն յիշատակի։ Կար երեմն որ Երեմիա

մարգարէն իւր թափուր հայրենիքի մխացող  
աւերակների վերայ նստած կուլար, անցորդ  
ներու ուշքը կըդարձնէր արիւնաշաղախ հայ-  
րենիքի վերայ ձայն տալով «Զեզ ասեմ, ձեզ  
ասեմ անցաւորք ճանապարհաց, դարձարուր,  
հայեցարուք և տեսէք թէ իցեն ցաւք ըստ ցա-  
ւցս լեալ, որ ի վերայ իմ հասին»։ Խորայէլի  
ժողովրդի ցաւերը մեղմ են այն սոսկալի ցա-  
ւերի առաջ, որոց արջնգոյն ծովում լողացաւ  
Յորի համբերութեամբ տոկուն հայ բազմաշար-  
շար ժողովուրդը։ Աշխարհիս անիրաւութիւ-  
նը կուզէր նահատակ ժողովրդին յետամնաց,  
անտաղանդ, առանց անցեալի, աւազակարարոյ  
մի ժողովուրդ հռչակել։ Բայց մեր նախնեաց  
քրիստոնէական հաւատի, հանճարի, նահատա-  
կութեան յաւիտենական վկայ Աստուածը մի  
մարդ հանեց մեր միջից, հզօր ձայնով ողբա-  
ցող մի մարգարէ, Հայոց ս. եկեղեցու մի հա-  
րազատ զաւակ, որ հայ ժողովրդի հազարաւոր  
նոր նահատակների գերեզմանոցում շրջելով մի  
սոսկալի հառաշանք արձակեց վիրաւոր հոգուց,  
մի խոր հոգոց աննման ս. հայր Նարեկացի  
Գրիգորի խօսքերով «Զայն հառաշանաց սրտի  
հեծութեան ողբոց աղաղակի քեզ վերընծայեմ  
տեսողդ գաղտնեաց»։ Այդ հառաշանքով նա  
պսակեց իւր դրքի ճակատը, այդ հառաշանքով

Հրաւիրեց հայ և օտար ընտիր արանց մոխիր-ներու տակից հանել ու հանդէս քերել հայու փառքը, քրիստոնէական գործերը, յիշատակ-ներն ու ցոյց տալ թէ յանուն քրիստոնէական գաղափարների է թափում Հայոց արդար արիւն։ Այդ սրանչելի գրքում հանդէս դրուեցան մեր հրաշալի վանքերն ու իրենց գործը քրիստո-նէական աշխարհի և մասնաւրապէս հայ աշ-խարհի համար. այդ տեղ հայկական տաղանդի օրինակ հերոսներ արձանացան, այդ տեղ հայ ընտանիքի գաղափարական կեանքի փայլն երե-ւաց, այդ տեղ Հայոց սակաւ խինդն ու ան-վերջ վշտերի արձագանքներն ամփոփուեցան և այդ ամենի շուրջ նոր անմեղ նահատակների արիւնով պսակ հիւսուեցաւ, որպէս զի Սոտ-ուած տեսնի ու ցնցուի, մարդիկ տեսնեն աշ-խարհի անիրաւութիւնն ու գարհուրին։

Այս դեռ հերիք չէ. երբ Խրայէլի ժողո-վրդի նման անարդարութեան անապատ ծնեց Հայոց աւագ սերունդի արիւնը, բաց երկնքի տակ մնացին մատադ ու անտերունչ որբեր, յառաջ եկաւ մի առաւել սոսկալի տեսարան. մութ անտառից վրայ թափուեցան հոգիների գերիշներ և քրիստոնէական գործի՝ պատրուա-կով, հացի գնով փորձեցին հանել հայ նահա-տակների մնացորդին, Հայոց և. եկեղեցու

գրկէն, ազգային փարախէն։ Մղկտաց Զանշեանի հոգին։ Նա հաւատում էր թէ Աստուած կարող է և մեր մնացորդին բարոյական վերածնութեան Աւետեաց երկիրը հասցնել։ Եթէ գիտենանք ինքներս մեր ու։ Նախնեաց յիշատակների վերայ խնամել մեր սեփական որբերին։ Եւ նա իւր սիրած վանքերու մէջ որբանոցներ բանալ տուաւ ու իւր քրտինքով ու վաստակով մարմնացրեց և այդ գաղափարը։

Սովորական մարդոց վերայ դրած թարմ պսակները կըթօչնին, կըթօթափին, արձանները հող կըդառնան, բայց Զանշեանի անունը անմեռ կըմնայ, քանի որ չայոց աշխարհում որբ կայ։ Քանի որ «Եղբայրական օպնութիւն» գիրքը կըպահուի գրադարաններում, իրրե տապանագիր Հայոց փառքի և նահատակութեան։

Դաշտերի ծաղիկները միայն իրենք զիրենք չեն զարդարում, այլ և դաշտերն են զարդարում և հայկական դաշտի լաւագոյն մի զարդ մահու գիրին է անցնում։ Այս ցաւը մեռնողին չէ, այլ մերն է, վասն զի մեծ իդիալիստի գաղափարները, յոյսերի ծաղիկներով են սփռում նաև զերեզմանական կեանքը։ Նորա կեանքը, իդէալները, գործը, ապագան հաւատով է լլցուած։ Հաւատ առ բարին, հաւատ առ Աստուած։ այդ հաւատով միայն մեծ մարդիկ հա-

մոզուած են, թէ իրենց վսեմազոյն գաղափար-ները ցնորք չեն, այլ ոգեորող, ոյժ տուալ, կատարեալ երջանկութիւն, քաղցր մահ, և յաւիտենական անմահութիւն բերող են:

Մեր վիշտը մեծ է, վասն զի կորուստն է մեծ. մեր կեանքից խոյս է տալիս մեծութիւնը և նրա տեղը բռնողներ չկան. ո՞քան քիչ են գաղափարի լուիկ ու շահաբեր մշակներ: Այս խոհերու առաջ մնում է մեզ մրմնջալ, մեր ո. հօր նարեկացու և Զանշեանի մրմունջով. «Զայն հառաջանաց, սրտի հեծութեան...» մնում է մեզ աղօթել «Նայեա ի մեզ և ողորմեա մեզ Քրիստոս, որ ունիս բազում գլութիւն»: Արդարներու դասն առ երկնաւոր վարդապետութեանդ քրտնաջան աշակերտին և տուր մեզ մարդիկ Զանշեանի հոգով, Զանշեանի հաւատով, Զանշեանի տաղանդով և փառաւոր լինի քո սուրբ անունը այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:



զաքարի մասունքներ բնից Ի՞նչ այս շատութափ  
ու պատճեն են քազարները ու ամէ զամբը զամ-  
բաւ և շահ զարու ու այ Եղիսաբեդ բանակա-  
ռան ամ բարձր ժամանումնեա ուստանան  
Եղիսաբեդ իր մասի և նոն զամբի ու Ա  
մի ունեն ուստան Ե պատճենութեա զան Եղի-  
սաբեն ամայ զամբաւու ու զամ ամ և զա-  
մբաւուն զամբաւու ու Ամ զամբաւուն ամ  
զան զամբաւու զան Եղիսաբեն չուստ ուստան ամ  
զամբաւու զամբաւու և ուստանուն զան ա-  
նուն անուն գայ զամբաւու զամբաւու զան Ե  
պատճենուն Եղիսաբեն ուստ զան պատճեն  
ուստանուն զամբաւու ամ զամբ զամբաւու  
զան և պատճենուն մասունքներ բնակի-  
տուն զամբաւու խորու վաստակաւ բնակի-  
տուն զամբաւու և խորու վաստակաւ բնակի-  
տուն զամբաւու և ամ և նոն զամբաւու զան ա-

մ վայ զամբաւու զան

## ԵԱՆՈԹՈՒԹԻՒՆ

- Ա. Խօսուած է 1900 Երեանի ս. Պօղոս-Պետրոս եկեղեցում («Արարատ» 1900 յունիս)։
- Բ. » 1897 ն. Նախիջևանի ս. Լուսաւորիչ եկեղեցում («Արարատ» 1900 ապրիլ)։
- Գ. » 1897 Օդեսայի ս. Լուսաւորիչ եկեղեցում («Արարատ» 1900 փետրուար)։
- Դ. » 1896 յունիսի 30-ին, Վարդավառի տօնին Օդեսայի Հայոց եկեղեցում։
- Ե. » 1896 յուլիսի 28-ին Օդեսայի Հայոց եկեղեցում։
- Զ. » 1900 յունուարի 5 Ճբագալոյցին, Երեանի ս. Պօղոս Պետրոս եկեղեցում։
- Է. » 1900 Փետրուարի 17-ին Երեանում ս. Վարդանանց տօնի Դպրանոցական հանդիսում։
- Ը. » 1900 մարտի 19-ին Երեանի Ս. Պօղոս Պետրոս եկեղեցում։
- Թ. » 1900 օգոստոսի 13-ին Օդեսայի եկեղեցում Զանշեանի լիշտակին:\*)

\*) Ծանօթ.—Սոյն իմաստով խօսուած է նաև Տփխիսի Թանգոյեան ս. Աստուածածնի եկեղեցում, 1901 թ. յուլիսի 22-ին։





25



ج

1942